ԵՐԿԻՐ

ԱՊՐԻԼ 19-26
2002

#4

«Խաղաղության կուսակցությունը» պատերազմ է հայտարարում



Իր դարն ապրած այս մեքենան կանգնած է մեզանում իրենց դարն ապրած գաղափարներ կրող կուսակցության՝ ՀՀՇ գրասենյակի բակում: Իհարկե, կարելի է այս ավերակ մեքենան նոր գույնով ներկել, վրան նոր մասեր ավելացնել, սակայն միևնույն է՝ կմախքը հին է մնալու: Նույնն է նաեւ փվյալ կուսակցության պարագայում:

Հանրապետության քաղաքական կյանքում աշխուժանալու, լիբերալ դաշտի միավորման առանցք դառնալու, առաջիկա նախագահական եւ խորհրդարանական ընտրություններին ՀՀՇ-ի նախապատրաստվելու մասին վերջին օրերին բավականաչափ խոսվել է: Սակայն առկա վերլուծություններն ու մեկնաբանությունները հիմնականում պտտվել են, մեր կարծիքով՝ երկրորդական նշանակություն ունեցող հարցերի շուրջ. լիբերալների միավորումը կկայանա՞, թե՞ ոչ, ՀՀՇ-ի թեկնածուն Լ. Տեր-Պետրոսյա՞նն է. թե՞ մեկ ուրիշը, հիշականները կձգտե՞ն միավորել ողջ ընդդիմադիր դաշտը, թե՞ կբավարարվեն միայն լիբերալներով եւ այլն: Անշուշտ, այս հարցադրումները նույնպես հետաքրքիր են ու էական նշանակություն կարող են ունենալ ներքաղաքական առաջիկա գործընթացներում, բայց, այդուհանդերձ, դրանք երկրորդական են առավել առանցքային, գաղափարախոսական, ռազմավարական նշանակության հարցերի համեմատ, այն է՝ ի՞նչ գաղափարա-ծրագրային հիմքով ու առաջարկներով է ՀՀՇ-ն դարձյալ հավակնում քաղաքական ակտիվ դերակատարման, ի՞նչ պատկերացում եւ նպատակադրում ունի քաղաքական այս ուժը մեր պետության ու ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի առումով: Իսկ այս հարցերն առավել կարեւոր են, քանզի դրանց պատասխանների ազդեցության «ժամկետը» չի սահմանափակվելու նախընտրական քարոզարշավով կամ ընտրություններով, այլ պայմանավորելու է մեր պետության զարգացման հունը տեսանելի ապագայում:

Ինչ-որ իմաստով մինչ օրս առկա խոսակցությունների ու վերլուծությունների թեմատիկան եւ ուղղվածությունը ձեռնտու էր ՀՀՇ-ին: Դա նրանց հնարավորություն էր տալիս հիմնականում ինքնադրսեւորվել հանրության մեջ շրջանառվող թեմաների շուրջ մեկնաբանություններ անելով. «27-ի գործ», «Ա1+»-ի խնդիր, գործող իշխանության վարած քաղաքականության քննադատություն եւ այլն: Սակայն ներքաղաքական զարգացումների եւ, որ առավել էական է, տարածաշրջանային գործընթացների տրամաբանությունը ՀՀՇ-ից պահանջում է հստակեցնել մի շարք հարցերի կապակցությամբ իր դիրքորոշումը:

էջ 3

Տեխնոլոգիական խաչմերուկ

Եվրամիության հովանու ներքո տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) տարածաշրջանային խորհրդաժողովը Երեւանում պետք է կայանար դեռեւս անցյալ տարվա նոյեմբերի 9-11-ը, սակայն ինչ-ինչ պատճառներով այն հետաձգվեց մինչեւ այս տարվա ապրիլի կեսերը: Ապրիլի 15-16-ը այդ համաժողովը այնուհանդերձ կայացավ:

Եվրամիությունը կարծես թե «բաշխել է» տարածաշրջանային նշանակության ծրագրերը անդրկովկասյան եռյակի միջեւ. Վրաստանը էկոլոգիական ծրագրերի իրականացման կենտրոնն է, Ադրբեջանը՝ տրանսպորտային ի դեմս «Տրասեկա» եւ «Ինոգեյթ» ծրագրերի: Մեզ բաժին է ընկել տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն դառնալու հեռանկարը: Ակնկալվում է, որ Երեւանը ողջ տարածաշրջանի համար կդառնա SS ոլորտի մասնագետների պատրաստման խոշոր կենտրոն՝ տեղի համալսարաններ-ի բազայի վրա: Համենայնդեպս, նման շեշտադրում կա «էԼ-Զարգացում Կովկասի համար» թեմայով խորհրդաժողովի մասնակիցների ստորագրած եզրափակիչ հայտարարության մեջ:

Այդ նպատակով Եվրամիության հանձաժողովը որոշում է կայացրել 2002-2003 թթ. ֆինանսական տարում Հայաստանին 1,8 միլիոն եվրո հատկացնել SS բնագավառի մասնագետների տարածաշրջանային կենտրոն հիմնելու համար: Նման ներուժ, իհարկե, մեր երկիրն ունի:

էջ 7

Հիշատակ

Ապրիլի 21-ին, ժամը 12-ին Արագածոտնի մարզի Թալինի ենթաշրջանի Արեգ գյուղում տեղի կունենա ՀՀ ազգային հերոս, Գետաշենի ինքնապաշտպանության հրամանատար **ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ** հուշարձան-համալիրի բացումը:

Քաղաքական 2

Դաշնակցությունը կենտրոնում է

«Պարզ զրույցի փորձ». Դաշնակցությունն իր աշխարհայացքով սոցիալիստական կուսակցություն է, որը հավատում է հասարակության արդարությանն ու համերաշխությանը: Միայն այդ կերպ է հնարավոր միասնականորեն լուծել մեր ժողովրդի ազգային պետական խնդիրները:

Խորհրդարան 4

Ի սկզբանե էր հանձնաժողովը

Խորհրդարանական եռօրյաների՝ ավանդույթ դարձած կանոնակարգային վեճի պատճառը ընտրական հանձաժողովների ձեւավորման շուրջ եղած վեճն էր: Ընտրությունների արդարությունը, թափանցիկությունը շատերի համար երկրորդ պլան էր մղվել: Կարգախոսը մեկն էր. իշխանափոխություն:

Հանդիպում 5

Մաքուր ձեռքերն անհրաժեշտություն են

Սժ պատգամավոր Աղասի Արշակյանը ցանկանում է ազնիվ ու մաքուր ուժերի հետ գործակցել, «որովհետեւ կեղտոտ ձեռքերով լավ ու ազնիվ գործեր չեն ստացվում», ու այս առնչությամբ խորհուրդներ է տալիս «Հանրապետություն» կուսակցությանը:

Իրավական 9

Բռնությունները վկայող փվյալներ կան

«Հոկտեմբերի 27»-ի գործով Նախաքննության ընթացքում կիրառված խորթ մեթոդների մասին կան, այսպես կոչված՝ օպերատիվ տեղեկություններ, որոնց տիրապետելով հանդերձ՝ զինդատախազությունը որեւէ քայլ չի ձեռնարկել: Ինչո՞ւ. պարզաբանումներ է տալիս ՀՀ զինդատախազության քննչական բաժնի ղեկավար Արտակ Հարությունյանը:

Մշակույթ 12

Թատրոնը՝ որպես հայելի եւ լուսարձակ

Այս տարի լրանում է Մայր թատրոնի 80-ամյակը: Այն մեր հասարակության արտապատկերն է իր բոլոր կողմերով: Թատրոնի ներկա ու նախկին գործիչները գնահատում են անցած ուղին:



Հայրենի 13

Ոգու փիլիսոփայություն

Արցախում նշվեց Արթուր Մկրտչյանի մահվան 10-րդ տարելիցը: ԼՂՀ առաջին ղեկավարի հիշատակը հարգեցին պետական ու կուսակցական մի շարք ձեռնարկներով: Նրա գործը անմահացավ իր երկրի անկախությամբ ու պետականության ամրապնդմամբ:

ملحق أزتك

ԽՈՍՔ

Քաղաքական կամքի օրը

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի տարեթվեր, որոնք դառնում են համախմբման, միասնականացման միջուկը: Հայության համար այդպիսին են Սարդարապատի հերոսամարտը, Արցախյան զարթոնքը, Հայաստանի անկախությունը ու նաեւ Հայոց ցեղասպանությունը, որի 87-րդ տարելիցն է նշվելու մի քանի օր հետո աշխարհի տարբեր անկյուններում:

Այս օրը վաղուց արդեն մեզ համար դադարել է լինել միայն հիշատակումի, սգո ու խնկարկման օր:

Ցեղասպանության զոհերի հիշատակի օրն այլեւս քաղաքական կամքի ու վճռականության ցուցաբերման օր է: Այն արդեն ամենօրյա քաղաքական, դիվանագիտական ու հասարակական արշավի, պայքարի խտացման օր է:

Այդ գործընթացը, իր առաջին քայլերն սկսելով 60-ականներին Հայաստանում եւ հատկապես Սփյուռքում, այսօր առավել զորացած ու զորեղացած է իբրեւ միջազգային դիվանագիտական, քաղաքական ատյանների օրակարգի հարց:

Ցեղասպանության դատապարտման խնդիրը այսօր ոչ միայն բարոյական, այլեւ քաղաքական կայացման, ամրապնդման ու պաշտպանվածության հարց է մեր ժողովրդի ու հայրենիքի համար:

Այն այսօր միայն մեր ժողովրդի հարցը չէ, այլեւ համաշխարհային հասարակության առավել բարոյականացման, արդարության վերահաստատման խնդիր, որի հանգուցալուծումը չի ենթադրում միայն առանձին մի փաստաթուղթ կամ բանաձեւ, այլ նաեւ գործընթաց Ցեղասպանության վերքերի ու հետեւանքների վերացման ուղղությամբ:

Այդ հարցի արծարծումն ու հետապնդումը համազգային խնդիր է, որը, ցավոք, քաղաքական ու աշխարհայացքային տարբերությունների պատճառով հայոց պետության կողմից չի հետապնդվել, եւ ծանր հետեւանքներ ունեցավ մեր ժողովրդի միասնականության առումով: Խնդիրը ողջ ծանրությամբ թողնված էր առանձին քաղաքական, հասարակական շրջանակների վրա:

Այսօր Հայաստանը առավել ամուր է իր արտաքին քաղաքականության մեջ Հայոց ցեղասպանության հարցը օրակարգ բերելով: Այս կեցվածքով այն առավել հասկանալի ու հարգելի է դարձել միազգային ու համազգային բեմերում:

Նման վճռակամությունը, միասնականությունը մեզ կարող է տալ այն փափագելի արդյունքը, հանուն որի տասնամյակներ շարունակ սերունդներ են դիմել զոհողության, զոհել են կյանքեր, տարել հոգեմաշ պայքար:

Սակայն վերջնագծին կարող ենք հասնել միայն անվերապահ համախմբմամբ տուրք չտալով օտար ու ներքին որոշ շրջանակներից տրված շեղող ազդանշաններին:

Նման առաջին իսկ զգուշավոր քայլերը ունեցան իրենց վնասակար ազդեցությունը, որոնց դեմ հնարավոր եղավ պատնեշ կանգնեցնել միայն միասնական զգոն կեցվածքով:

Եվ այսօր հիշատակի օրը, հարկ է կրկին վերահաստատել հայության Դատի պաշտպանության ու ամբողջական իրավունքներին վերատիրացման մեր ժողովրդի եւ քաղաքական ղեկավարության վճռականությունը:

ՊԱՐԶ ԶՐՈՒՅՑԻ ՓՈՐՁ

Դաշնակցությունը կենտրոնում է

Աղվան ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մեր սոցիալ-տնտեսական քաղաքականության էությունը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. արտադրության առավելագույն արդյունավետ, ազատ պայմանների ապահովում, արտադրության արդյունքների առավելագույն արդարացի վերաբաշխում:

Մեր հասարակությունը, մեր պետությունը առողջ չէ: Մենք չենք կարողացել այս ժամանակին, այս տեղին համապատասխան, պետական ազգին հատուկ արժեքային համակարգ ստեղծել: Այսինքն՝ ազգային-պետական կյանքի կանոնների հիմք, որ մեծ հաշվով ընդհանուր էր լինելու քիչ թե շատ կայացած քաղաքական բոլոր ուժերի, միմյանց հերթագայող իշխանությունների համար:

Այստեղից էլ՝ թշնամանքի հասնող անհանդուրժողությունը, միմյանց, բայց իրականում երկրի հեռանկարը բացառելու հիմար կիրքը, որ քաղաքական կենսակերպի է վերածվում: Այստեղից էլ՝ անորոշությունը, թե ինչպիսի պետությունն ու հասարակությունն է մեր նպատակը:

Հիմա բուն նյութը: Յոթանասուն տարի կոմունիստները Դաշնակցությանը որակում էին ազգային բուրժուազիայի կուսակցություն և մեղադրում ու բացառում էին: Հայաստանը սոցիալիստական էր, ուրեմն Դաշնակցությունը բուրժուական պիտի լիներ: Կոմունիստներն անցան, ՀՀՇ-ն սկսեց մեզ քննադատել սոցիալիստ լինելու մեջ: Տեսեք՝ մենք ազատ շուկայի, նոր տնտեսավարման կրողներն ենք, նրանք անցյալ են, նրանք սոցիալիստ են, ապագայում նրանց հետ հույսեր մի կապեք: (Թեև, միջանկյալ ասեմ, 1990-91թթ. ՀՀՇ-ն Սոցիալիստական ինտերնացիոնալին միանալու շատ գործնական քայլեր էր անում):

Հիմա փորձեմ բացատրել, թե որտեղից է Դաշնակցությանը հակառակ բևեռներից քննադատելու հիմք-պատճառը:

Դաշնակցությունը սոցիալիստական գաղափարախոսությունը որդեգրեց անցյալ դարասկզբին, երբ այն Եվրոպայում ամենաառաջադիմական ուսմունքն էր: Այն անհատի ու հավաքականության շահերի պաշտպանության իրական մեխանիզմ էր ենթադրում: Հետո էր, որ աշխարհի մեկ վեցերորդ մասում, ինչպես ցանկացած լավ բան, ծայրահեղացվեց ու այլասերվեց՝ վերածվելով սոցիալական միայն մի շերտի ընչազուրկների գաղափարախոսության:

Դաշնակցությունը երբեք չի եղել մի խմբի կուսակցություն:

Մեր պատկերացմամբ, հասարակությունը կարող է ինքնակազմակերպվել, պետական լիարժեք կյանքով ապրել, եթե իր անդամների բացարձակ գերակշիռ մասի արժեքները, շահերը համընկնում են, եթե այդ մասի ինքնադրսևորման հնարավորությունները հավասար են:

Պարզ բան է. եթե բնակչության 5 տոկոսը ապահովված է ամեն բանով, իսկ 95 տոկոսը զրկված է ամեն ինչից, ապա այս երկու խմբերը չեն կարող կանգնել կողք-կողքի և համատեղ մարդկային, ազգային, պետական ընդհանուր նպատակներ հետապնդել:

Բնականն այն է, որ հասարակության առնվազն 60 տոկոսը արժանապատիվ կյանքով ապրելու բոլոր հնարավորություններն ունենա: Այսինքն՝ ուժեղ միջին խավ, որն է պետականության հիմնական կրողը: Միշտ կլինի 20 տոկոս կազմող շերտ, որի լիարժեք կյանքի երաշխավորը, պաշտպանը պետությունն է: Խոսքը տարեցների, հաշմանդամների, բնությունից զրկվածների ու անկարողների մասին է: Եվս 20 տոկոսը առավել ապահովվածներն են՝ հավասար պայմաններում իրենց խելքով, ձեռնարեցությամբ, կազմակերպվածությամբ առանձնացողները: Եվ պետության խնդիրն է այս 20 տոկոսից միջոցներն ուղղորդել մյուս 20 տոկոսի կենսապահովմանը:

Ահա այս դեպքում է, որ հասարակության 80 տոկոսը միասնական է մարդկային, ազգային, պետական խնդիրներ առաջադրելու ու լուծելու նպատակադրման մեջ:

Սա է հասարակական-պետական կացութաձևի Դաշնակցության պատկերացումը: Այո, Դաշնակցությունը արդիական ըմբռնմամբ սոցիալիստական կուսակցություն է: Դաշնակցության սոցիալիզմի հիմքում սոցիալական արդարության և հասարաշխության գաղափարներն են, որ լավագույնս իրագործվում են ժամանակակից աշխարհի ամենազարգացած երկրներում:

Մեկ նախադասությամբ, մեր սոցիալ-տնտեսական քաղաքականության էությունը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. արտադրության առավելագույն արդյունավետ, ազատ պայմանների ապահովում, արտադրության արդյունքների առավելագույն արդարացի վերաբաշխում:

Այսինքն՝ բնակչության բացարձակ գերակշիռ մասի իրավունքների պաշտպանություն:

Հանդիպումներ դեսպանների հետ

Ապրիլի 12-ին ՀՅԴ «Սիմոն Վրացյան» կենտրոնում տեղի ունեցավ Գերագույն մարմնի հանդիպումը ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի հետ: Հանդիպմանը մասնակցել են ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, ԳՄ անդամներ Աղվան Վարդանյանը և Էդուարդ Ղազարյանը:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են ՀՅԴ դիրքորոշումները հանրապետության ներքաղաքական զարգացումների վերաբերյալ: Շոշափվել հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանն առնչվող մի շարք հարցեր: Կողմերը կարծիքներ են փոխանակել նաեւ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ:

ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամներն իրենց մտահոգությունն են հայտնել Կրասնոդարի երկրամասում ստեղծված ազգամիջյան լարվածության կապակցությամբ: Դեսպանը, իր հերթին, ներկայացրել է իրավիճակի հաղթահարմանն ուղղված մի շարք առաջարկներ:

* * *

Ապրիլի 15-ին ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, ԳՄ անդամներ Միքայել Մանուկյանը, Էդուարդ Ղազարյանը, Գեղամ Մանուկյանը ընդունել են Հունաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Անտոնիոս Վլավիանոսին:

Քննարկվել են հանրապետության ներքաղաքական զարգացումներին, հայ-հունական հարաբերություններին վերաբերող հարցեր: ՀՅԴ ներկայացուցիչները ներկայացրել են հունական ՊԱՍՕԿ կուսակցության հետ համագործակցությունը: Հույն դեսպանը ներկայացրել է տարածաշրջանային զարգացումների շուրջ իր պետության մոտեցումները:

Քննիչը հարվածել է ՆԳ փոխնախարարին

Իրավապահ մարմինների աշխատակիցների, այդ թվում՝ նաեւ քննիչների սանձարձակ ու կամայական վարքագիծը, ՆԳՆ եւ դատախազության աշխատակիցների միջեւ եղած տարաձայնությունները, համենայն դեպս լրագրողների համար, առանձնապես նորություն չեն, եւ այդ մասին մեկ անգամ չէ, որ գրվել է, բայց այն, ինչին ականատես եղանք ապրիլի 18-ին, գերազանցեց բոլոր դժգույն կանխատեսումները:



ՀՀ դատախազության քննչական խմբի անդամ Բեգինյան Արսենը, անտեսելով օրենքն եւ օրինականությունը, հայհոյում ու հարվածում էր ներքին գործերի փոխնախարար Հովհաննես Վարյանին: Արդյունքում՝ սկսվեց մի իսկական ծեծկոտուք, քանզի քննիչին կարգի հրավիրելու համար ՆԳՆ աշխատակիցները նույնպես դիմեցին ֆիզիկական ուժի:

Մանրամասնելով՝ նշենք, որ միջադեպը տեղի է ունեցել ՀՀ դատախազության շենքի դիմաց, ժամը 12:30-13:00-ն ընկած ժամանակահատվածում: Պատճառների մասին շրջանառվում էին երկու իրարամերժ վարկածներ: Դատախազությանը հարող շրջանակներն ասում էին, թե մեղավորը ՆԳ փոխնախարարն է, քանզի իրեն թույլ է տվել անվայելուչ խոսել քննիչի հետ՝ առաջ բերելով վերջինիս վրդովմունքը: Ըստ մյուս վարկածի՝ ընդհարումը հրահրել էր քննիչը իր ամբարտավան պահվածքով: Խնդիրն այն է, որ դատախազությանը հարող վճռաբեկ դատարանի շենքում երեկ շարունակվում էր «Հոկտեմբերի 27»-ի գործով դատաքննությունը, եւ ինչպես միշտ, ՆԳՆ-ն ձեռնարկել էր անվտանգությունն ապահովելուն միտված գործողություններ: Ըստ այդմ, արգելվել էր Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի հարեւանությամբ գտնվող պահակակետի մոտ օտար (այդ թվում նաեւ դատախազության աշխատակիցների) ավտոմեքենաների կայանումը: Բայց քննիչ Բեգինյանը, չգիտես ինչու, որոշել էր շենքարկվել ավտոտեսուչի հրահանգին եւ ավտոմեքենան կանգնեցրել էր չարտոնված վայրում ու անգամ, մատնացույց անելով իր ավտոմեքենայի պետհամարանիշը, ասել՝ չե՞ս տեսնում, ով եմ: Այսինքն՝ Բեգինյան Արսենը, նկատի ունենալով, որ վարում է «101 SO 01» պետհամարանիշով ավտոմեքենա եւ ներկայումս ներկայացնում է դատախազության քննչական վարչությունը, իրեն իրավունք է վերապահել շենքարկվել ինչ-որ ավտոտեսուչի պահանջներին, հայհոյել է տեսուչի պահանջների կատարումը վրա պնդող ՆԳ փոխնախարարին:

Դժվարանում ենք ասել, թե նշյալ վարկածներից որն է առավել ճիշտ արտացոլում իրականությունը, բայց այն, որ օրինականությանը հետամուտ լինելու կոչում ունեցող քննիչը հայհոյել ու հարվածել է փոխնախարարին՝ փաստ է: Ինչպեսեւ փաստ է այն, որ երկու տասնյակի հասնող ՆԳՆ աշխատակիցները, անգամ ֆիզիկական ուժի գործադրմամբ, չէին կարողանում քննիչին նստեցնել ավտոմեքենա, եւ վերջինս ոտքով, ձեռքով հարվածում էր՝ ում պատահի եւ ոնց պատահի, բղավելով՝ «էս շենքում (ըստ երեւույթին, նկատի ունենալով ՀՀ դատախազության շենքը.- U.S.) կենդանի մարդ չկա՞»: Իսկ երբ ի վերջո հաջողվեց նրան նստեցնել ՆԳՆ-ին պատկանող ավտոմեքենան, այն անմիջապես շրջապատեցին դատախազության մի խումբ աշխատակիցներ, նրանց թվում՝ ՀԿԳ քննիչ Հակոբ Բաբայանն ու դատարանում մեղադրանքները պաշտպանող վարչությանն դատախազ Վարդգես Գեւորգյանը՝ պահանջելով բաց թողնել քննիչին: Հետագա իրադարձություններն արդեն զարգացան ՀՀ դատախազության շենքում, քանզի պրն Վարյանը եւս նրանց հետ մուտք գործեց դատախազություն:

Տվյալ պարագայում այնքան էլ կարեւոր չէ, թե որ վարկածն է օբյեկտիվը, քանզի ցանկացած դեպքում Բեգինյան Արսենը իրեն թույլ է տվել օրինապահին անվայել արարք եւ օրինապահ համակարգում աշխատելու բարոյական իրավունք պարզապես չունի: Ո՞վ կարող է երաշխավորել, որ ՆԳ փոխնախարարին հարվածող եւ հայհոյող քննիչը կծառայի օրենքին եւ նույնպիսի վարքագիծ չի դրսեւորի որեւէ գործով նախաքննություն իրականացնելիս, ինչպիսի «ջերմ» վերաբերմունքի կարժանացնի իր աշխատասենյակում հարցաքննվող վկաներին, կասկածյալներին, մեղադրյալներին:

Հավանական է, որ միջադեպը դառնա միջգերատեսչական հարաբերությունների ճշգրտման պատճառ, եւ կողմերից յուրաքանչյուրը փորձի ապացուցել իր անսխալականությունը մյուսին սեւացնելու միջոցով: Այդ են վկայում նաեւ տարբեր լրատվամիջոցներում դեպքից անմիջապես հետո հնչած անանուն հեռախոսազանգերը, երբ ոմանք, ներկայանալով իբրեւ դատախազության աշխատակիցներ, փորձել են կատարվածի ողջ պատասխանատվությունը բարդել ՆԳ փոխնախարարի վրա...

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

«Խաղաղության կուսակցությունը» պատերազմ է հայտարարում

էջ 1

Եվ առաջին հերթին այն հարցերի, որոնք, ՀՀՇ-ի կարծիքով, վճռորոշ նշանակություն ունեն մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների սեփական պատկերացումներն ունեցող արտաքին ուժերի, նախ եւ առաջ արեւմտյան որոշ շրջանակների համար:

Թերեւս, անդրօվկիանոսյան հավանական հովանավորների հավանական պատվերի մեջ լավագույնս տեղավորվելու նկատառումներից ելնելով էր, որ անցած շաբաթ ՀՀՇ-ի որոշ գործիչների կողմից մի փոքր քողազերծվեց նշված ռազմավարական բնույթի նպատակադրումների դաշտը: Մասնավորապես, Արա Սահակյանը, անդրադառնալով նախագահական ընտրություններում Լ. Տեր-Պետրոսյանի հնարավոր թեկնածության առաջադրմանը եւ նշելով, թե նախկին նախագահը հրաժարական է տվել մեկ շարժառիթով ԼՂՀ հիմնահարցի կարգավորման խնդրի իր տարբերակի մերժման արդյունքում, իսկ հասարակության հետ որեւէ այլ խնդրում նա բանավեճ չի ունեցել, եզրակացնում է. «Քաղաքական ուժերը պատրա՞ստ են վերադառնալու Լ. Տեր-Պետրոսյանի հարցադրումներին: Կարո՞ղ են, արդյոք, քաղաքական ուժերը հանդես գալ պրագմատիզմի դիրքերից, ինչին կոչում էր Լ. Տեր-Պետրոսյանը: Եթե հասարակությունը վերադառնա այդ հարցադրումներին, փորձի դրանք բանականությամբ ընկալել, գուցե զգա Լ. Տեր-Պետրոսյանի կամ նրա տիպի գործչի կարիքը»:

Կարծում ենք բավական հստակ է ասված: Մի կողմ թողնենք այն հարցը, որ նախկին նախագահը հասարակության հետ բանավեճ է ունեցել (եւ շատ խոր բանավեճ), ըստ էության, բոլոր մյուս ոլորտներում նույնպես: Այնուհանդերձ, հարցադրման ձեւով նրա բանավեճը ձեւակերպվել էր «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» հայտնի հոդվածում, եւ հենց այդ հարցադրմանն էլ այսօր մեզ կոչ են անում վերադառնալ: Չնայած եթե անկեղծ լինենք, ապա ԼՂՀ կարգավորման ՀՀՇ-ական տարբերակի հարցադրման վերակենդանացման հայտն ուղղված է ոչ այնքան մեր հանրությանը, որքան արտաքին աշխարհին: Սրանով ՀՀՇ-ն ուզում է ցույց տալ, թե ինքը իշխանության գալու պարագայում Հայաստանի դիրքորոշումն արտաքին ճակատում ընդհանրապես եւ Արցախի հարցում մասնավորապես, պատրաստ է տեղափոխել զիջումների ճանապարհ: Միեւնույն ժամանակ, ՀՀՇ-ն խոստովանում է, որ իր համար էականը իշխանափոխությունն է, իսկ նախագահական ընտրություններում կհաղթի Լ. Տեր-Պետրոսյա՞նը, թե՞ «նրա տիպի գործիչը» (այսինքն՝ «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» հոդվածի դրույթներն առաջ տանող որեւէ անձ) այսպես ասած, նպատակահարմարության հարց է:

Անդրադառնանք ներկայիս ընդդիմության դիրքորոշումների հարցին: Գիտակցու՞մ են նրանք, որ ՀՀՇ-ի քաղաքական պայքարի ռեւանշի հիմքը հենց այս հարցադրում-նպատակադրումն է: Եվ գիտակցու՞մ են, որ այս հարցադրում-նպատակադրումն անցկացնելու են միտված եղել ՀՀՇ-ի այս տարիների բոլոր քայլերը սկսած հոկտեմբերի 27-լույս 28-ի խորհրդակցությունից, վերջացրած «եռյակներին» ու «վեցյակներին» աջակցելը: Մի՞թե պարզ չէ, որ մարդու իրավունքների, խոսքի ազատության այսօրվա խոսակցությունները զուտ ֆոն են մինչեւ 1998-ը ՀՀՇ-ի կողմից ներքին ու արտաքին քաղաքականության մեջ իրականացրած գծին վերադառնալու նպաստավոր պայմաններ ձեւավորելու համար: Եվ մի՞թե պարզ չէ, որ ներկայիս անդեմ ու ներքին բազում հակասություններով ապրող ընդդիմության միավորման մեջ ամենից շահագրգռվածը հենց ՀՀՇ-ն է: Բայց նրանց շահը ոչ թե Ա. Գեղամյանին կամ Ստ. Դեմիրճյանին իշխանության գլուխ բերելն է, այլ այսօրվա իշխանության ու նրան աջակցող քաղաքական ուժերի բացառումը, ինչն արդեն կանաչ ուղի կբացի Արցախը 1998-ի «հոդվածի» տրամաբանությամբ հանձնելու համար: Ստացվում է, որ այսպես կոչված խաղաղության կուսակցությունը հերթական անգամ պատերազմ է հայտարարում Հայաստանի հասարակական կարծիքին:

Ա. ԱՐԱՄՅԱՆ

Պատվիրակությունը Կմեկնի Կրասնոդար

Այս օրերին Կրասնոդարի երկրամասում իշխանությունների կողմից ճնշումներ են գործադրվում տեղի հայ համայնքի նկատմամբ, եւ դրանք որակվում են իբրեւ երկրամասում բնակվող հայերի կեցության իրավական պայմանները ճշգրտող գործողություններ, մինչդեռ խնդիրը օրեցօր առավել մտահոգիչ է դառնում:

Այս գործողությունները մտահոգում են նաեւ ՀՅ խորհրդարանական քաղաքական ուժերին: Ազգային ժողովում ՀՅԴ խմբակցությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում առաջարկվեց իրավիճակին ծանոթանալու եւ հետագա անցանկալի զարգացումները կանխելու նպատակով ՀՀ ԱԺ եւ ՌԴ Պետդումայի պատգամավորների մի խումբ գործուղել Կրասնոդար: Իսկ տեղի հայկական գերեզմանատան ավերումը ՀՅԴ-ն համարում է ազգային թշնամանքի հրահրման փորձ: Խմբակցության հայտարարության մեջ ասվում է. «Իրականացվող գործողությունները տեղի հայերի շրջանում գնահատվում են որպես տեղական իշխանությունների կողմից խտրականության եւ անհանդուրժողականության քաղաքականություն:

Այս հարցերն արծարծվել են ՀՀ-ում ՌԴ դեսպանի հետ: Հանդիպման ընթացքում ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը իր մտահոգություններն ու առաջարկությունները է փոխանցել եւ անմիջական կապի մեջ է ՌԴ Պետդումայի համապատասխան հանձնաժողովների ղեկավարների հետ: Առաջիկայում հարցը կքննվի Պետդումայի խորհրդում: Այսօրինակ խնդիրների կարգավորման համար ստեղծված է իրավական անհրաժեշտ դաշտ, մասնավորապես գործողության մեջ են 3 պայմանագիր ՀՀ եւ ՌԴ կառավարությունների միջեւ կամավոր վերաբնակեցման գործընթացի կարգավորման մասին, ՌԴ տարածքում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների ՀՀ տարածքում ՌԴ քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին պայմանագրերը, ինչպես նաեւ ՀՀ ու ՌԴ քաղաքացիների առանց արտոնագրի այցելությունների մասին համաձայնագիրը»:

Մտահոգիչ հարցերը քննարկելու նպատակով ՀՀ-ում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովը ապրիլի 18-ին արդեն հանդիպում է ունեցել ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի հետ:

Խորհրդարանական պատվիրակության այցը Կրասնոդարի երկրամաս նախատեսվում է ապրիլի 18-ին:

Բ. Հ.

Ի սկզբանե էր հանձնաժողովը

ԱԺ նիստերն օրըստօրե վերածվում են ավելի շատ շահարկումների դաշտի, ուր շահարկողներն ու խաղի մեջ մտած անձինք ոչ սեփական կյանք միայն քողարկելու, ոչ էլ «խաղը» կապարելագործելու ցանկություն ունեն: Ապրիլի 15-17-ի եռօրյա նիստը դարձյալ մեկնարկեց Արշակ Սադոյանի գոռում-գոչյունով ու նրա համախոհների կոչերով, որոնք ցանկացած խնդիր բիեցնում են իշխանափոխության անհրաժեշտությունից կամ հանգեցնում դրան: Այսինքն՝ ընդդիմությունը մեր երկրում միայն մեկ իմաստ ունի՝ հասնել նախագահի հրաժարականին, մինչդեռ առողջ ընդդիմությունը միանգամայն այլ եւ կարեւոր ուժ է ցանկացած այլ երկրում: Իհարկե, կրկնակի բարդ է իրավիճակը, երբ իշխանություն ունեցող քաղաքական ուժն էլ զերծ չէ սուբյեկտիվ դիրքորոշումներից եւ ամեն միջոց գործադրում է, որպեսզի չգրկվի իշխանությունից:



ԲԵԼԼԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախընտրական տրամադրությունները եւ վարկանիշ բարձրացնելու գերխնդիրը ընդդիմադիրներին տեղափոխել է մի հարթություն, ուր գործում է «ամեն ինչ հնարավորինս տանել դեպի իշխանափոխություն» սկզբունքը:

Խորհրդարանական հերթական փոխադարձ վիրավորանքներն այս անգամ սկսվեցին «ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու»՝ 16 պատգամավորի հեղինակած օրինագծի շուրջ: Շրջանառության մեջ կա եւս 4 նախագիծ, որոնցից մեկը Կոմկուսինն է, իսկ մյուսները՝ անհատ պատգամավորներինը: Ամբողջ խնդիրն այն է, որ ընդդիմադիր ուժերը ամեն կերպ փորձում են այս հարցը եւս տեղափոխել նախընտրական շահարկումների դաշտ: Ինչպես միշտ, գերակշռում էր անձնական վիրավորանքների ոճը, հերթական անգամ «զրույց» ծավալվեց հանրապետական Վազգեն Խաչիկյանի եւ ընդդիմադիր Արշակ Սադոյանի միջեւ:

- Սա օպերային դահլիճ չի ձայնալարերիդ համար (Վազգեն Խաչիկյան):

- Օպերային դահլիճ լիներ՝ կտային աչքիդ թայը կհանեին (Արշակ Սադոյան):

Ահա, սա է հայրենի խորհրդարանի պատկերը: Եվ քանի որ քննարկման ներկայացված ընտրական օրենսգրքի ընդունման դեպքում ընտրական հանձնաժողովում այսօր անդամներ ունեցող որոշ ոչ խորհրդարանական քաղաքական ուժեր կզրկվեն ընտրություններում «հաջող խաղեր» տալու հնարավորությունից, ամեն միջոց գործի է դրվում նախագիծը տապալելու համար: Մինչդեռ այս նախագիծը հնարավորինս բարելավվելու կարիք ունի, եթե իսկապես մեզ պետք են ազատ, արդար ընտրություններ ու ժողովրդավարություն: Սահմանադրությունից հետո մեր երկրի համար այս երկրորդ կարեւորագույն փաստաթուղթը թեեւ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում դեռ փոփոխությունների անհրաժեշտություն ունի, բայց սկզբունքային որոշ դրույթներ գործողի համեմատ փոփոխվել են, որպեսզի հնարավորինս բացառվի ընտրակեղծիքը: Նախագծում ներառված են հետեւյալ առանցքային դրույթները. ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով եւ տեղամասային ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվում է գործող կամ արձակված ԱԺ յուրաքանչյուր խմբակցության կողմից նշանակված մեկական անդամից եւ ՀՀ նախագահի կողմից նշանակված անդամներից, որոնց թիվը մեկով պակաս է խմբակցությունների թվից, այսինքն հանձնաժողովի 6 անդամ կնշանակվեն ԱԺ կողմից, իսկ 5-ը՝ նախագահի: Ահա այստեղ է, որ ընդդիմադիրները անցնում են շահարկումների պնդելով, որ այսպիսով ձեւվում է օրենք՝ նախագահի վրայով: Եվս մի փոփոխություն, ըստ որի՝ զինծառայողները կարող են մասնակցել մեծամասնական ընտրակարգով ընթացող ընտրություններին, եթե գտնվում են իրենց մշտական գրանցման վայրում, անհանգստություն է առաջացնում ընդդիմադիրների շրջանում: Նրանք կարծում են, որ դա կարող է նպաստել, որպեսզի զինծառայողները քվեարկեն գործող նախագահի օգտին: Միակ խնդիրը, որի շուրջ «մտավախություններ» չհնչեցին, ՀՀ քաղաքացիություն ստացած փախստականներին ընտրելու իրավունք տալն էր: Նախընտրական տրամադրությունները եւ վարկանիշ բարձրացնելու գերխնդիրը ընդդիմադիրներին տեղափոխել է մի հարթություն, ուր գործում է «ամեն ինչ հնարավորինս տանել դեպի իշխանափոխություն» սկզբունքը: Քանի որ քննարկումները վերածվել են պարզունակ շահարկումների, առաջարկ հնչեց, որ այս օրենքը ընդունվի ընտրություններից հետո, որպեսզի դրանք հնարավորինս արդար լինեն: Սակայն եթե նախագիծը արդեն ներկայացվել է ԱԺ-ում քննարկման, այն պետք է բարելավվի եւ մինչ նստաշրջանի ավարտը հաստատվի, որպեսզի ընտրություններից առաջ խաղի կանոնները հստակ ու պարզ լինեն բոլոր քաղաքական ուժերի համար:

ՔՎԵՐՈՒՄ

«Արտահերթ նիստ». դուբլ...

Բանը հասավ նրան, որ Շավարշ Քոչարյանը նախաձեռնեց «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքում» փոփոխություններ կատարելու համար արտահերթ նիստ հրավիրելու ստորագրահավաք, այն դեպքում, երբ օրենքի համահեղինակ նույն Շավարշ Քոչարյանը ընդամենը մեկ շաբաթ առաջ ամեն կերպ հավաստիացնում էր, որ 37-րդ կապուղին «Շարմ» ընկերությանը տրամադրելու Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշումը հակասում է օրենքին, եւ որ օրենքը թերի չէ: Ի՞նչ է կատարվում, փաստե՞րն են մոռացվում, թե՞ Շավարշ Քոչարյանը վստահ է մարդկանց կարճ հիշողության վրա:

Ընդհանուր 45 ստորագրությամբ հրավիրվեց արտահերթ նիստ, որը չկայացավ քվորում չլինելու պատճառով:

Արդյունքում հստակ դրսեւորվեցին ցանկությունները, որոնք երբեմն քողարկվում են «օրենսդրական նախաձեռնություններ» անվան ներքո: Ամենաանելանելին «Օրինաց երկիր»-ի վիճակն էր, եւ Արթուր Բաղդասարյանը ստիպված սկսեց մեկնաբանությունների մի շարք թե իրենք միացել են ստորագրահավաքին, որովհետեւ կողմ են արտահերթ նիստ հրավիրելուն, բայց դեմ են այն նախագծին, որի համաձայն, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամները պիտի նշանակվեն խորհրդարանական ընտրություններում 5 տոկոսը հաղթահարած կուսակցությունների կողմից: Արթուր Բաղդասարյանը կատարված քայլը պատճառաբանում է նրանով, որ իրենք «հասունացած ասելիք ունեն ԱԺ-ում», եւ «պետք է բացատրել, որ փոփոխությունները սխալ են, դրա կարիքը չկա» եւ այլն: Մինչ որոշ քաղաքական գործիչներ այս հոգեվիճակում էին, Շավարշ Քոչարյանն այնքան էլ վատ չէր զգում, որ ի վերջո արտահերթ նիստը չկայացավ քվորում չլինելու պատճառով, քանի որ իր գործը համարեց կատարված, հատկապես, երբ ապրիլի 15-ին էլ մի խումբ մարդկանց էր հրավիրել ԱԺ-ի մուտքի մոտ ցույցի պահանջով, որ փոփոխություն կատարվի Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրենքում, բայց ոչ ոք չգիտեր, թե ի՞նչ փոփոխություն են պահանջում եւ ինչո՞ւ: Իսկ Մանուկ Գասպարյանն էլ «գիտեր, բայց չէր ուզում ասել», շարունակում էր պնդել, որ փոփոխությունների նախագիծը պատգամավորներին ներկայացնելու անհրաժեշտություն չկա, եւ պետք է ստորագրահավաքին միանան առանց նախագծին ծանոթանալու. «Ուզում ենք առանց կարդալու ստորագրեն, դեպուտատ գիտեմ երկու տող 3 տարում չի կարդացել, դրա համար էլ այդ փաստաթուղթը չենք տալիս»:

Բ. Հ.

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

«Իրավունք եւ միաբանությունը» չի անհանգստանում

Խորհրդարանական ճեպազրույցները հիմնականում վերաբերում էին Կրասնոդարի երկրամասում ծավալված իրադարձություններին, որոնց հետեւանքով մեծապես տուժում են ազգային փոքրամասնությունները, ավերվել է տեղի հայկական գերեզմանատներից մեկը: Այս անհանգստացնող իրավիճակի շուրջ իրենց մտահոգությունները հայտնեցին բոլոր խումբ-խմբակցությունները:

Առանձնահատուկ էր «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության տեսակետը: Ըստ Աղասի Արշակյանի Կարսնոդարում անելիք ունեն հատկապես «կոմունիստ-ընկերները», քանի որ նահանգապետը իրենց կուսակից ընկեր Տկաչովն է, իսկ իրավիճակն էլ, ըստ «Ռուսաստան-Բելառուս» միության կողմնակցի, անհանգստացնող չէ, եւ հայերը դրանից առանձնապես չպետք է վատ զգան: «Իրավունք եւ միաբանությանը» մտահոգում է մի այլ խնդիր, որ իրենց ելույթները Ա1+-ի չգործելու պայմաններում ծախողվում են, քանի որ 20 րոպե տեւողությամբ ելույթները որեւէ այլ լրատվամիջոց ամբողջովին չի հրապարակում: Այս ամենը, Աղասի Արշակյանի կարծիքով, գրաքննություն է:

Շավարշ Քոչարյանի նախաձեռնած, բայց քվորում չլինելու պատճառով չկայացած արտահերթ նիստը եւ խորհրդարանի շենքի մոտ կազմակերպած ցույցը «շոու» որակեց «Ագրոարդյունաբերական ժողովրդական միավորում» խմբի անդամ Վարդեւան Գրիգորյանը, իսկ ԱԺՄ խմբակցության անդամ, հանրապետական Ֆիլարետ Բերիկյանը հիշեցրեց, որ այսօր այն մարդիկ են պաշտպանում Ա1+-ին, որոնց հասցեագրված հայհոյանքները դեռ չեն ջնջվել շենքերի պատերից: 14 կուսակցությունների կազմակերպած հանրահավաքներն էլ, ըստ կոմկուսի, միայն Ա1+ -ի թեմայով չեն լինելու, առաջիկայում խոսվելու է նաեւ արտագաղթի, սոցիալական վիճակի եւ այլ հարցերի շուրջ:

ՀՅԴ խմբակցության ղեկավար Աղվան Վարդանյանը, անդրադառնալով 14 կուսակցությունների կազմակերպած հանրահավաքներին, նշեց, որ Ա1+-ի հարցի քաղաքականացումը եւ այդ կարգի խնդիրները զուտ նախընտրական շրջանի տրամադրությունների վերածելը Ա1+-ին պաշտպանելու լավագույն ձեւը չեն: ՀՅԴ-ն չի միացել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նպատակով արտահերթ նիստ հրավիրելու ստորագրահավաքին, քանի որ գտնում է, որ նախաձեռնությունը որեւէ կապ չուներ օրենքի բարելավման հետ եւ ընդամենը նախընտրական գործընթացը շարունակելու միտում էր հետապնդում, իսկ այն առաջարկը, ըստ որի Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը պետք է բազմակուսակցական լինի, ամենեւին էլ չի նշանակում, որ այդպիսով անկախություն է տրվում հանձնաժողովին: Այս հարցի հետ կապված «Ագրոարդյունաբերական ժողովրդական միավորում» խմբի անդամ Վարդեւան Գրիգորյանը հիշեցրեց, որ հանձնաժողովի անդամների նշանակումը ՀՀ նախագահի կողմից ժամանակին պաշտպանել է հենց Շավարշ Քոչարյանը:

Սեփ. լր

Մաքուր ձեռքերն անհրաժեշտություն են

վստահեցնում է Աղասի Արշակյանը

Մուշեղ Սաղաթելյանի քրեական գործի պատճառով բարիկադների տարբեր կողմերում հայտնվեցին երբեմնի դաշնակիցները. «Հանրապետություն» կուսակցության առաջնորդներ Ալբերտ Բազեյանն ու Արամ Սարգսյանը սկսեցին պաշտպանել իշխանափոխության հարցում իրենց դաշնակից Աղասի Արշակյանի նկատմամբ ֆիզիկական բռնություններ գործադրած Մուշեղ Սաղաթելյանին: Արդյո՞ք դա չի խանգարում համագործակցությանը. այս հարցի շուրջ է մեր թղթակցի զրույցը ԱԺ պատգամավոր, «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անդամ ԱՂԱՍԻ ԱՐՇԱԿՅԱՆԻ հետ:

Ես կուզենայի, որ ազնիվ ու մաքուր ուժերի հետ գնանք մեր գործունեությանը, որովհետեւ կեղտոտ ձեռքերով, ինչպես ընդունված է ասել, լավ ու ազնիվ գործերը չեն ստացվում:

- Ինչպե՞ս եք գնահատում Մուշեղ Սաղաթելյանի գործով դատավարության ընթացքը:

- Ճիշտն ասած՝ դատավարության ընթացքին այդքան ակտիվ չեմ հետեւում, թեեւ այդ գործով տուժող եմ. միայն մամուլի հրապարակումներին եմ թռուցիկ ծանոթանում: Դատավարությունը, կարծում եմ, բացի իրավականից, ավելի շատ քաղաքական նշանակություն ունի ու պետք է դաս լինի այդ եւ մյուս համակարգերի անպատիժ մնացած, բայց զանցանք կատարած բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաեւ աճող սպաների համար, որ արդարությունը, թեկուզեւ ուշացումով, այնուամենայնիվ, հաղթում է:

Իհարկե, կուզենայի, որ այդ գործը անհամեմատ ավելի ընդգրկուն լիներ, եւ նրա հետ դատվեին նաեւ նրա մյուս հանցակիցները, մասնավորապես Ռոմեն Ղազարյանը եւ մյուսները: Եվ, երբ ասում եմ, որ նա ընտրովի է դատվում՝ նկատի ունեմ հենց այդ հանգամանքը, որ այսօր նրա կողքին չեն մյուսները, քանզի նրանք լուռ են մնում: Բայց մի օր պետք է սկսել եւ հաստատակամ գնալ այդ ուղղությամբ, ինչը, կարծում եմ, բխում է նաեւ դատապարտվողի շահերից: Քանզի գիտեմ, որ 1996թ. սեպտեմբերի 25-26-ի գործերով կան բավականին տուժողներ, որոնք չեն ուզում բացահայտվել կարծելով, որ վաղ թե ուշ կբռնացնեն ու ինքնադատաստան կտեսնեն իրենց նկատմամբ կատարված ոտնձգությունների համար: Թեեւ ափսոսանքով պետք է արձանագրեմ, որ կան նաեւ վկա դարձած տուժողներ, եւ ոչ բոլորն են քաղաքացիական համարձակություն դրսեւորում ու պարզ ճակատով, հրապարակավ դատապարտում կատարվածը: Եթե ուզում ենք ունենալ քաղաքացիական հասարակություն, եւ մեզանում հաստատվի օրենքի գերակայություն, ապա պետք է լինեն այսպիսի դատավարություններ, ու, անշուշտ, օրենքի առաջ պետք է հավասար լինեն բոլորը:

- Բայցեւայնպես, որոշ քաղաքական գործիչների կողմից չեն դադարում Մուշեղ Սաղաթելյանին իբրեւ քաղբանտարկյալ ներկայացնելու փորձերը:

- Մուշեղ Սաղաթելյանը ամենաշարքային քրեականն է, որն ունեցել է քաջնազարի բախտով իրավապահ մարմիններում դիրք գրավելու հնարավորություն եւ այդ դիրքը չարաշահել է: Այն կուսակցությունների մեծ մասը, ովքեր այդ տեսակետն են պաշտպանում, միգուցե բարեխիղճ մոլորվածի կարգավիճակում են կամ էլ լավատեղյակ չեն Սաղաթելյանի գործերին: Իզուր թող իրենց չխայտառակեն: Որպես ընդդիմադիր գործիչ, կարող եմ ասել, որ Սաղաթելյանին պաշտպանելով՝ այդ գործիչները ջուր են լցնում իշխանությունների ջրաղացին. եթե ես իշխանություն լինեի, կթողնեի, որ մի լավ իրենք իրենց բացեին, ծակվեին, թե ում են պաշտպանում... բա որ հիմա հանեն Սաղաթելյանի՝ Շիրակի տարածքային ՆԳ բաժնի պետ աշխատած տարիների չարագործություննե՞րը...: Օրինակ, հիշում եմ՝ 1994 թ.-ին երբ ԳԽ-ի մարդու իրավունքի հարցերով հանձնաժողովում էի, ստացա մի կալանավորի լացակումած բողոք, որն իր նամակում հաստատում էր կատարած արարքի նողկալիությունը, բայցեւ խնդրում պետական պաշտպանություն (կալանավորը, եթե անգամ կատարել է ամենաստորագույն արարքը, գտնվում է պետության պաշտպանության տակ, եւ նրան պետք է դատես, հետո մահապատժի ենթարկես, այլ ոչ թե ինքնադատաստան տեսնես)՝ տեղեկացնելով, թե չինովնիկները՝ հանձին Մուշեղ Սաղաթելյանի, ինչպիսի անմարդկային գործողությունների են դիմում, ինչպես են սառը ջուր լցրել եւ տկլոր վիճակում իրեն գցել ցուրտ տեղը: Արդյունքում՝ այդ տղայի ոտնաթաթերը ցրտահարվել էին եւ ամպուտացիայի ենթարկվել: Այսինքն՝ այս մեթոդները Գյումրիի մեկուսարանում վաղուց էին կիրառվում: Կամ ինչպես էր դատարկվում Շիրակի գունավոր մետաղը: Այս ամենը ասում եմ ոչ թե նրան նոր մեղադրանք առաջադրելու համար, այլ որպեսզի այն կուսակցությունները, որոնք նրան քրտնփչած պաշտպանում են... (էդ բառը չի լինի մամուլի էջերում ասել), ովքեր ուզում են այդ զանգվածից քաղաքական գործիչ սարքել, չարաչար սխալվում են:

- Ի դեպ, այդօրինակ փորձեր անում են նաեւ Ձեր դաշնակից «Հանրապետություն» կուսակցության ղեկավարները՝ հանձինս Ալբերտ Բազեյանի եւ Արամ Սարգսյանի: Չե՞ք փորձել նրանց բացատրել Մուշեղ Սաղաթելյանի իսկական էությունը:

- Ոչ, չեմ ասել, բայց կարծում եմ, նրանք այդքանը գոնե հիմա պետք է որ հասկանան: Գոհ եմ ճակատագրիցս այն իմաստով, որ Սաղաթելյանի երկրպագուները ինձ հետ նույն ձեւով չվարվեցին, ինչպես մյուս տուժողների եւ վկաների հետ: Լավ է, որ այդպես եղավ, որովհետեւ եթե նույն պահվածքը լիներ, ապա պետք է շրջվեի, դահլիճում փնտրեի վերոնշյալ ընկերներին, որովհետեւ դրան նախորդած օրերին կարծես թե այնտեղ են եղել, հեռուստացույցով տեսել եմ, ու ասեի՝ ինչո՞ւ եք վարկաբեկում ձեզ, սրա՞նք են ձեր կուսակիցները, սրանցո՞վ ենք գնալու իշխանափոխության...: Փառք Աստծո, այդ իմաստով բախտս բերեց. չէի ուզենա, որ նման իրավիճակ ստեղծվեր, որովհետեւ Բազեյանին հարգել ու հարգում եմ, եւ եթե մյուս գործիչներին այդքան լավ չեմ ճանաչում, նրանց հետ ընդհանուր կենսագրություն շատ քիչ ունեմ, ապա Բազեյանի հետ ունեմ երկար կենսագրություն, եւ չէի ուզենա, որ նա իր հաշվարկների մեջ սխալվեր:

- Գուցե ինքներդ պատասխանեք Ձեր հնչեցրած հարցին՝ այդպիսիների հե՞տ եք մտադիր գնալ իշխանափոխության:

- Ես դա ընդհանրական եմ ասում: Իհարկե, եթե մարդ գնում է ինչ-որ մի գործի, անպայման նայում է, թե ովքեր կան իր կողքին, ես կուզենայի, որ ազնիվ ու մաքուր ուժերի հետ գնանք մեր գործունեությանը, որովհետեւ կեղտոտ ձեռքերով, ինչպես ընդունված է ասել, լավ ու ազնիվ գործերը չեն ստացվում: Եթե նույնիսկ ինչ-որ ժամանակավոր հաջողություններ լինում են, ապա անպայման... ժողովրդական մի լավ ասացվածք կա՝ ինչ ցանես, այն էլ կհնձես: Այդ իմաստով կուզենայի, որ Բազեյանն ու նրա մյուս ընկերները ոչ ասեն ծայրահեղականությանը. ամեն գնով չէ, որ պետք է գնալ ծրագրերի իրականացմանը, միշտ չէ, որ նպատակը արդարացնում է միջոցները:

Սոնա ՏՐՈՒԶՅԱՆ

«Հաշտեցման» ուրվականը Հայաստանում

Հայոց ցեղասպանության քաղաքական ճանաչման ուղղությամբ աշխատանքներին իր վնասը հասցրած եւ հանրային կարծիքի ճնշման տակ գործունեությունը՝ դադարեցրած այսպես կոչված՝ «Թուրք-հայկական հաշտեցման» հանձնաժողովը փորձ է արվում վերականգնել: Հոգ չէ, որ ուրիշ անունով, այլ անդամներով: Կարեւորը՝ որոշ ուղեղային կենտրոնների համար նման մի խմբակի գոյությունը անհրաժեշտություն է իրենց հեռահար ծրագրերի իրականացման համար: Այն, որ արդեն չգործող հանձնաժողովի ձեւավորման նախաձեռնության ակունքներում ԱՄՆ պետքարտուղարությունն ու նրա հովանու տակ գործող հասարակությունները էին, եւ նրանք էին իրականացնում հանձնախմբի ֆինանսավորումը, վաղուց հայտնի փաստ է ու որեւէ կասկածի ենթակա չէ:

Այսօր էլ այդ հանձնաժողովի ճարտարապետները «նոր մոտեցումներով» փորձում են կյանքի կոչել նախկին ֆորմատը: Դա հասկանալի դարձավ Անդրանիկ Միհրանյանի եւ Վան Գրիգորյանի Հայաստան այցի ընթացքում, երբ նրանք ինտենսիվ հանդիպումներ ունեցան քաղաքական ու լրագրողական շրջանակների հետ, փորձեցին իրենց հիմնավորումներն ու բացատրությունները տալ այդ գործընթացի շարունակման ուղղությամբ:

Իրականում դժվար է, գուցե նույնիսկ անհնար տարհամոզել Հայաստանի քաղաքական շրջանակներին, քանզի արդեն անցած տարի Ազգային ժողովի խումբ-խմբակցությունների մեծ մասը համատեղ հայտարարությամբ դատապարտեցին «հանձնախմբի» ձեւավորումն ու գործունեությունը: Սակայն հիմա էլ հրապարակ է իջնում նախաձեռնության բուն ճարտարապետներից մեկը ԱՄՆ պետքարտուղարության փորձագետ Դեյվիդ Ֆիլիպը, որը ծրագրում է երկուշաբթի օրը Երեւանում հանդիպում ունենալ քաղաքական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հավանաբար, հերթական անգամ փորձ է արվելու «բացատրական» աշխատանք ծավալել: Ըստ որոշ դիվանագիտական աղբյուրների Դեյվիդ Ֆիլիպը ժամանակին հայտնի է եղել հայ-ադրբեջանական հաշտեցման նախաձեռնությամբ, որի Բաքվի կողմից մերժվելուց հետո նախաձեռնել է այսպես կոչված «թուրք-հայկական» ֆորմատը:

Հատկանշական է, որ այս աշխուժացումը վերստին սկիզբ է առնում Ցեղասպանության տարելիցի նախօրյակին ու կրկին անտեսելով հասարակական կարծիքը:

Տ. Մ.



Անհեռոք խողովակներ

Շահագործումից կառավարում

Տասնյակ կարիներով Երեւանի ջրմուղի եւ կոյուղու ցանցերը շահագործվել են առանց կապարողական գծագրերի ու սխեմաների, կարելի է ասել՝ կուրորեն, զուտ այս կամ այն վարպետի, մասնագետի անձնական հիշողությունների հիման վրա: Տեխնիկական թղթերի արխիվային գործավարություն չի կարվել, բացակայում են առօրյա աշխատանքային թելադրող-ուղղորդիչ սխեմաները: Գոյություն ունեցող նախագծերը անհրաժեշտ մանրամասներ չեն պարունակում եւ հաճախ էլ կողմնորոշիչ տեխնիկական պարամետրերն ու կարածական չափագրումները կտրուկ տարբերվում են փաստացի իրականացված շինարարական աշխատանքներից:

ՎԼԱԴ ՔՈՉՈՒՆՑ

Զգալի քանակությամբ ջուր պիտի ազատվեր՝ արդյունքում անհամեմատ բարելավելով ջրամատակարարման վիճակը հատկապես Շենգավիթ համայնքում, որտեղ տեղաբաշխված էր արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական մասը: Այլ խոսքով՝ սա նույնն է, թե Երեւան քաղաք մուտք գործող ջրաքանակը ավելացվեր մոտ 2000-2500 լ/վրկ. ջրով:

Գառնու ջրատարի շահագործման ընթացքում (Մարքսի փողոց) պարզվեց, որ շինարարը 110 000 վոլտ էլեկտրական կաբելը ներառել էր ջրատարի երկու հատվածները իրար միացնող դիտահորի՝ մոտ 20 սանտիմետրանոց բետոնե պատի մեջ: Բարեբախտաբար, մահացու դեպք տեղի չունեցավ. վթարային ծառայության փականագործը բետոն քանդող սարքի պիկը մտցրել էր կաբելի մեջ: Սա ցայտուն օրինակ է, որ վթարային բրիգադին չէր տրամադրվել գործարկվող ջրատարի այդ հատվածի կատարողական գծագիրը, որում պետք է նշված լիներ բարձրավոլտ կաբելի տեղը: Ակնհայտ է, որ պատվիրատուի կողմից տեխնիկական հսկողություն չէր իրականացվել, այլապես շինարարը չէր համարձակվի այդպիսի կոպիտ խախտում թույլ տալ: Տարիների ընթացքում բնական սերնդափոխություն է կատարվել համակարգերը սպասարկող անձնակազմերում: Կյանքից ժամանակին կամ անժամանակ հեռացած կադրերը մասամբ իրենց հետ «տարել են» գործնական գիտելիքների մի մասը: Փառք ու պատիվ

այդ մարդկանց, որոնք երկար տարիներ աշխատել են այս անշնորհակալ ու դեռեւս չգնահատված բնագավառում:

Ցանցերը շահագործող միջին օղակի վարպետը կամ մասնագետը անկարող է հաղորդակցվել համակարգի որեւէ կառույցի հետ՝ կարգավորման, բարելավման գործողություններ իրականացնելու նպատակով: Արդյունքում մեծանում են վթարների վերացման, ցանցերի կարգավորման նորմատիվային ժամկետները, էլ չենք ասում աշխատուժի անտեղի կորստի մասին:

Ժամանակին, կարեւորելով խնդիրը, փորձ արվեց, համատեղելով հնարավոր բոլոր տվյալները, վերականգնել քաղաքի շրջանային տեղամասերի ջրմուղ-կոյուղու ցանցերի սխեմա-գծագրերը: Հարցի լուծումը խթանելու համար նույնիսկ մրցույթ հայտարարվեց շրջանային տեղամասերի միջեւ: Սակայն արդարությունը պահանջում է խոստովանել, որ մինչեւ վերջ հետեւողական վերաբերմունք չցուցաբերվեց խնդրին, եւ գործընթացը մնաց թերի:

Տարօրինակ է, որ կան բարձրագույն կրթությամբ երիտասարդ մասնագետներ, ովքեր 15-20 տարի աշխատելով համակարգում՝ պատեհ առիթի դեպքում նշում են, որ գծագրեր չկան, սխեմաներ չկան եւ այլն: Մինչդեռ անհատական նախաձեռնություն ցուցաբերելու դեպքում տարիների ընթացքում օր օրի կարելի էր լրացնել այդ բացը: Փակվել են երբեմնի հզոր արդյունաբերական կոմբինատներ, ձեռնարկություններ, ֆաբրիկաներ, բազմաթիվ գործարաններ գործում են մասամբ, դադարել է արտադրական մի շարք ճյուղերի գործունեությունը, փոխվել է քաղաքի տնտեսության ինֆրակառուցվածքը, հետեւաբար փոխվում են նաեւ Երեւան քաղաքի զարգացման ուղղությունները: Արդիականացման եւ հեռանկարային զարգացումներին համապատասխանեցնելու կարիք են զգում նաեւ քաղաքի ջրմուղ-կոյուղու համակարգերի հիմնական սխեմաները:

Ելնելով նշված փոփոխություններից, միաժամանակ հիմք ընդունելով խոշոր քաղաքների ջրասպառման նորմատիվ-հաշվարկային համամասնությունները՝ պետք է փաստել, որ զգալի քանակությամբ ջուր պիտի ազատվեր՝ արդյունքում անհամեմատ բարելավելով ջրամատակարարման վիճակը հատկապես Շենգավիթ համայնքում, որտեղ տեղաբաշխված էր արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական մասը: Այլ խոսքով՝ սա նույնն է, թե Երեւան քաղաք մուտք գործող ջրաքանակը ավելացվեր մոտ 2000-2500 լ/վրկ. ջրով:

Բայց, ինչպես տեսնում ենք, իրավիճակը էական փոփոխություն չի կրել: Եվ զարմանալի է, որ Ջրային տնտեսության պետական կոմիտեի ղեկավարը ՀՀ նախագահի անակնկալ հարցին՝ Երեւանի քաղաքացիները ե՞րբ կունենան 24-ժամյա ջրամատակարարում, հանպատրաստից պատասխանում է, թե 2004 թ. վերջին բոլորը կապահովվեն շուրջօրյա ջրամատակարարումով: Ավելի ցցուն օրինակ, որ այսօր էլ գնահատված չեն համակարգերի առկա վիճակը, ու չկան դրանց զարգացման մոտակա տարիների եւ հեռանկարային ծրագրեր, չի կարող լինել: Իգուր չէ ասված, որ կադրերն են որոշում ամեն ինչ:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ համակարգի կոլեկտիվներում նոր մարդ դժվարությամբ են ընդունում. նա պետք է խորհրդավոր փորձաշրջան անցնի, եթե, իհարկե, նյարդերը դիմանան: Որպեսզի շենքի, թաղամասի, ցանցի կարգավորման հանգուցային կետերի մենաշնորհը իրենցը լինի (հանկարծ փոխարինող չունենան) տասնյակ տարիներով իրենց իմացածը ուրիշին չեն փոխանցի: Այս մտայնության պատճառն էլ այն է, որ չկան համապատասխան գծագրեր ու սխեմաներ, ու կարծես հասկանալի է, թե ինչու չեն ուզում դրանք ունենալ:

Միջին օղակում տեխնիկական սպասարկում-շահագործում իրականացնող անձնակազմը գրեթե ամբողջությամբ համապատասխան տեսական գիտելիքներ չունի, մարդը չգիտի ջրի ֆիզիկական ամենապարզ հատկություններն ու հիդրավլիկ պարամետրերը...

Որեւէ բնագավառի (դպրոց, բուհ, բժշկություն, արդարադատություն, պաշտպանություն ...) գործունեությունը կարեւորելիս բացի հերթապահ-ամպագոռգոռ բնորոշումներից եւ գնահատումներից, պետք է հասարակությունը, ի դեմս իշխանությունների, համարժեք վերաբերմունք ցուցաբերի այդ ոլորտի խնդիրների հանդեպ:

Ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի շինարարական ֆակուլտետի «Ջրամատակարարում եւ ջրահեռացում» բաժնի հազարից ավելի շրջանավարտների միայն 10 տոկոսն է աշխատել կամ աշխատում համակարգում: Հարց է ծագում՝ եթե այդ բնագավառի մասնագետների պահանջարկ կա (համոզված ենք, որ կա), ապա ինչո՞ւ երիտասարդ մասնագետը, ավարտելով այդ բաժինը, ձեռք բերելով համապատասխան տեսական գիտելիքներ, իր հետագա աշխատանքային գործունեությունը ծավալում է միանգամայն այլ ոլորտում: Պատասխանը պարզ է. համապատասխան իշխանավորները երբեւէ չեն մտածում՝ ինչպես անել, որ ծորակը բացելուց նաեւ ջուր հոսի, որ ջուր ունենալու համար աշխատանքային միջավայր ու պայմաններ (աշխատավարձ, բնակարան, կենցաղային հարցեր) ստեղծվեն երիտասարդ կադրերի համար:

Համակարգերի ճիշտ շահագործման ուղղությամբ կոնկրետ քայլեր չձեռնարկելով, շարունակաբար փորձության ենթարկելով, քննադատելով, փնովելով հոգնեցրել ու հեղինակազրկել ենք ջրմուղագործին:

ՆԻՍ

Նա տիրապետում է միայն «մակրոյին»

Ապրիլի 18-ի ճեպազրույցի ժամանակ նախարար Վարդան Խաչատրյանը մատուցեց միանգամից երկու անակնկալ: Մեկը հուսադրող, մյուսը՝ ոչ այնքան: Անցած շաբաթ Սալոնիկում կայացած Սեւծովյան համագործակցության եւ զարգացման բանկի նիստի ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել Հայաստանին տրամադրվելիք 5 մլն դոլար արժողության վարկային ծրագրի շուրջ: Այդ միջոցները անհամեմատ ցածր տոկոսադրույքներով (առանց առեւտրային բանկերի միջնորդության) կտրամադրվեն փոքր եւ միջին ձեռնարկատերերին:

Սակայն «ոչ այնքան» հուսադրող մտքեր սկսեցին հնչել այն բանից հետո, երբ «Երկիրը» փորձեց ՀՀ ֆինէկոնոմնախարարից պարզել, թե մինչ օրս ՓՄՁ (փոքր եւ միջին ձեռնարկատիրություն) զարգացմանն ուղղված վարկային ծրագրերը ինչպիսի՞ բարենպաստ ազդեցություն են գործել երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) վրա, կամ գոնե նախարարությունը տիրապետո՞ւմ է այս ոլորտում առկա միտումներին:

Նախարարը, խիստ կարեւորելով 10 մլն մարկ արժողության գերմանական երկու ծրագրի էությունը, այնուամենայնիվ, հարկ համարեց սոսկ տեղեկացնել, որ «ֆիննախը նման վարկային ծրագրեր չի տեսնում»: Ասել կուզի դրանց արդյունավետության պարզաբանումը վեր է իր իրավասություններից, իսկ ՀՆԱ-ում ՓՄՁ վարկային ծրագրերի ունեցած մասնակցության չափը ի զորու են որոշել միայն վիճակագրական կոմիտեն, գյուղատնտեսության ու առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունները: «Մենք տիրապետում ենք «մակրոյին», միկրոմասերով տեսնում ենք միայն կվազիֆիսկալ ծրագրերը... Ինքներս ոչ այդպիսի վիճակագրական ծառայություն ունենք, ոչ այլ բան»,- եզրափակեց ՀՀ գլխավոր էկոնոմիստը:

Ի նպաստ հողի շուկայի ձեւավորման

Կառավարության հերթական նիստում հավանության արժանացած մեկ որոշումով միջինացվել է բոլոր կարգի հողատեսքերի կադաստրային արժեքը, որը 1995 թ. հաստատված գների համեմատ ցածր է կրկնակի:

Երեկ տեղեկացնելով այդ մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանը պարզաբանեց, որ գյուղատնտեսական նշանակության հողերի գնահատման նոր կարգը, թեկուզ ժամանակավոր լինելով, միտված է հնարավորինս հավասարակշռելու վերջին տարիներին վարելահողերի եւ գյուղատնտեսական այլ նշանակության հողերի գների միջեւ խորացած «անջրպետը»: «Պարզել էինք, որ վարելահողի արժեքն ավելի ցածր է, քան, օրինակ, անասնագոմի տակ դրված հողակտորը, ինչը անթույլատրելի մոտեցում է տնտեսական արդյունավետության առումով»,- նշեց Մ. Վարդանյանը: Նրա խոսքերով, գնահատման ժամանակավոր կարգի կիրառումը կնպաստի նաեւ տարբեր հարկերի մասով մուտքերի ակտիվացմանը սկսած հողի հարկից, վերջացրած գույքահարկով: Կառավարության հանձնարարականի համաձայն, կադաստրի պետական կոմիտեն, պետեկամուտների ու ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունները, ամեն մեկը իր իրավասությունների մասով, կարճ ժամկետներում առաջարկներ պետք է ներկայացնեն հողի հարկի եւ գույքահարկի մասին օրենքներում կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ:

Հարկ է նաեւ նշել, որ հողերի գնահատման նոր կարգը չի տարածվում քաղաքային համայնքների վրա: «Այս քայլը առավելապես ուղղված է գյուղատնտեսական նշանակության հողի շուկայի ձեւավորմանը»,- հավաստիացրեց բանախոսը:

S. U.

Տեխնոլոգիական խաչմերուկ

էջ 1

Իսկ հնարավո՞ր է եռակողմ համագործակցությունը

Անշուշտ, այլ խնդիր է, թե տարածաշրջանային SS համագործակցությունը առաջին հերթին անդրկովկասյան եռյակի միջեւ կկայանա՞: Առայժմ փաստ է, որ Ադրբեջանը համառորեն ընդդիմանում է բոլոր այն տարածաշրջանային ծրագրերին, որոնց մեջ Հայաստանը ներկայացված է: Թերեւս դա էր պատճառը, որ Ադրբեջանը հրաժարվեց մասնակցել SS հայաստանյան համաժողովին, նույնիսկ փորձագետների մակարդակով: Թե որքանով են արդյունավետ մյուս տարածաշրջանային ծրագրերը կարելի է դատել դրանց ընթացքից ու միջանկյալ արդյունքներից: Նախ, բնապահպանական ծրագրերի մասին: Այս բնագավառում, թերեւս, լուրջ ծեռքբերումների մասին խոսելն ավելորդ է, քանզի լուրջ բյուջետային խնդիրներ ունեցող անդրկովկասյան երկրները նման ծրագրերին միջոցներ հատկացնելու հնարավորություն չունեն, իսկ այդ նպատակով արտաքին օգնությունները եղել են չնչին: Ինչ վերաբերում է տրանսպորտային ու խողովակաշարային կապուղիների միասնական տարածաշրջանային համակարգ ծեւավորելու ծրագրերին, ապա այստեղ էլ եռյակը կարծես թե գործում է Կռիլովի հայտնի առակի հերոսների նման, ավելի շուտ Վրաստանը եւ Ադրբեջանը ամեն ինչ անում են, որպեսզի Հայաստանը դուրս մնա նման ծրագրերից: Այս պայմաններում դժվար չէ կանխատեսել, որ նման հեռանկար է սպասվում նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառին վերաբերող տարածաշրջանային նախաձեռնությանը:

SS երեւանյան խորհրդաժողովի եզրափակիչ փաստաթղթի այն դրույթի իրականացումը, որով նախատեսվում է լրամշակել «Կովկասի SS նախաձեռնությունը որպես տարածաշրջանային միջպետական ծրագիր», առայժմ անիրական է թվում առաջին հերթին այդ ծրագրի մասնակցությանը Ադրբեջանի կտրուկ անհամաձայնության պատճառով: Անկախ դրանից, այդ ծրագիրը կարող է լրջորեն նպաստել Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ներուժի հետագա ծավալմանը:

ՀՀ SS ոլորտի վիճակը

Փաստենք, որ ամեն տարի այս ոլորտը Հայաստանում աճում է 30-50 տոկոսով, այսինքն առնվազն 6-8 անգամ ավելի արագ, քան ամբողջ տնտեսության աճն է: Այստեղ վճարվող աշխատավարձերը 40-50 անգամ բարձր են, քան տնտեսության միջին աշխատավարձն է: Իսկ բնագավառի ընդլայնման հնարավորություններն առավել քան մեծ են: Այժմ ոլորտում ընդամենը 3000 բարձրորակ մասնագետ է ընդգրկված, մինչդեռ, բնագավառի բանիմաց մասնագետների գնահատումներով, մեր շուկան մինչեւ 15 հազար մասնագետ կարող է ներգրավել, որոնցից յուրաքանչյուրը, իր հերթին, կարող է ստեղծել առնվազն երեք աշխատատեղ: Այդ նպատակին հասնելու համար, թերեւս, նախ պետք է լուծել համընդհանուր համակարգչային գրագիտության խնդիրը դպրոցներում: Այդ հարցում մեծ դեր կարող է խաղալ Սփյուռքը:

Ինչ վերաբերում է բուհերին, ապա այստեղ «բումը», կարելի է ասել, արդեն սկսվել է, քանզի շուկայի պայմանները խիստ հրապուրիչ են: Ահավասիկ, անցյալ տարիների համեմատ վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող մասնագիտությունների գծով 2-3 անգամ ավելի շատ դիմորդներ են դիմել պետական բուհեր: Թվերն ինքնին խոսուն են. մնում է խելամիտ օգտագործել արժեքավոր մտավոր ներուժը, այլապես շատ մեծ է նրա արտագաղթի հավանականությունը: Իսկ որ մասնագետների արտահոսք կա վկայում են ուսումնասիրությունները:

«Ուղեղների» արտահոսքի պատկերը

Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ՀՏՏՁՄ) դիտարկման համաձայն, այդ բնագավառի մասնագետների արտագաղթը ներկայումս թեեւ չի դադարել, սակայն փոխվել է միտումը: Համաձայն հետազոտության, եթե մինչեւ 90-ական թվականների երկրորդ կեսը արտագաղթող մասնագետների մեծամասնությունը բարձր որակավորում ունեցող համակարգչային ծրագրավորողներն էին ու բնագավառի գիտնականները, ապա դրանից հետո մեկնողների շուրջ 70 տոկոսը համակարգչային ոլորտի ուսուցիչներն են:

Իհարկե, մեկնածների թվում համակարգչային գործի ուսուցիչների գերակշռությունը մի կողմից անուղղակիորեն հաստատում է այս ոլորտում Հայաստանի մասնագիտական դպրոցի բարձր մակարդակը, մյուս կողմից դա նշանակում է, որ մենք շատ բարձր գին ենք վճարում բարձր որակավորում ունեցող մասնագետներին երկրում պահելու անկարողության համար: Փաստում են կատարված վերլուծության հեղինակները:

Այդուհանդերձ, ինչպես ասում են, չկա չարիք առանց բարիքի: Արտասահման մեկնած եւ այնտեղ մասնագիտությամբ աշխատանք գտած մասնագետների գերակշիռ մասը, ըստ կատարված ուսումնասիրության 68,5 տոկոսը, կապ է պահպանում Հայաստանի բուռն աճ ապրող տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության բնագավառի հետ: Արտագաղթած բարձրորակ մասնագետներից գոյացած նոր «սփյուռքը» հայրենիքում դրած գործի համար արտաքին շուկաներ է հայթայթում ու կազմակերպում ստեղծված «ծրագրային» ապրանքի արտահանումը: Փաստենք, որ Սփյուռքի աջակցության շնորհիվ է, որ Հայաստանում SS բնագավառը վերելք է ապրում: Ընդ որում, արտասահմանյան մասնակցությամբ հայաստանյան SS 27 ընկերություններից 26-ի տերերը հայեր են: Ինչեւէ. SS ոլորտի մասնագետների արտագաղթի մեկ այլ գործոն էլ կա, որ կապված է երիտասարդներ կողմից պարտադիր զինծառայությունից խուսափելու ձգտման հետ: Ըստ արված ուսումնասիրության, զորակոչային տարիքը լրացած SS մասնագետների 37 տոկոսը բանակում չի ծառայել, ընդ որում Հայաստանից մեկնած SS մասնագետների 20 տոկոսը երկիրը լքել է հենց բանակից խուսափելու պատճառով:

Մասնագետները վկայակոչում են SS ոլորտի յուրահատկությունը, ըստ որի նրանում գիտելիքներն ու հմտությունները արմատապես նորանում են ամեն երեքից վեց ամիսը մեկ, եւ նրանք, ովքեր զինծառայության են մեկնում, երկու տարում հիմնովին կորցնում են որակավորումը: Դրանից խուսափելու համար երիտասարդ մասնագետներն ամեն ինչ անում են, որպեսզի խուսափեն ծառայությունից, այդ թվում եւ երկրից հեռանալով:



Վտանգված հույսեր

Սակայն SS զարգացման վստահությունը խամրում է, երբ քննության նյութ է դառնում մեր երկրում կապի ենթակառուցվածքային վիճակը:

Ակնհայտ է, որ հեռահաղորդակցության արդի թույլ եւ բարձր սակագնային համակարգի պայմաններում առնվազն տարակուսելի են թվում Հայաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոն դարձնելու մեր որոշ պաշտոնյաների հավաստիացումները:

Շահեն ՄԻՆԱՍՅԱՆ

Զարգացման խնդիրը՝ առաջին պլանում

Մեր տնտեսության զարգացման խնդիրները առաջին հերթին ոչ ստանդարտ ռազմավարական լուծումներ են պահանջում, քանզի, այսօրվա վիճակով, մեր տնտեսությունը նույնքան հեռու է քաղաքակիրթ շուկայի իրողություններից, որքան 10-15 տարի առաջ: Կարող ենք փաստել, որ միջազգային ֆինանսական կառույցների փողերով ու նրանց աչալուրջ հսկողության տակ անցկացված «ազատական բարեփոխումները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ երկրի արդյունաբերական ներուժը ոչնչացնելու եւ երկրից մարդկային բարձրակարգ ռեսուրսները դուրս մղելու գործողություններ, որոնց մեջ մեկը մյուսին հաջորդող հայրենական կառավարությունները փութաջանորեն իրենց «համեստ» լուման են ներդրել: Այսպես կոչված «բաց դռների» քաղաքականության արդյունքում երկրի ներքին շուկան լցվել է արտասահմանյան էժանագին ու անորակ ապրանքներով, իսկ մեր արդյունաբերության եւ գյուղատնտեսության շատ մրցունակ արտադրություններ հայտնվել են լուսանցքային վիճակում:

Մյուս կողմից, աննախադեպ չափերի է հասել երկրի ֆինանսական կախվածությունը արտաքին աշխարհից: Եվ ամենագլխավոր արդյունքը. Հայաստանն այժմ դասվում է աշխարհի առավել կաշառահարված երկրների շարքը: Կաշառահարված պետական պաշտոնեության կողմից նման վարքագիծը վերջին տարիների առավել ակնառու իրողություններից է: Պատահական չէ, որ անկախության տասներորդ տարում էլ օրենսդիր իշխանությունների կողմից դեռեւս ընդունված չեն զանգվածային կաշառակերության համար զսպաշապիկ հանդիսացող հիմնարար օրենքները, ասենք երկրի բոլոր քաղաքացիների եկամուտների եւ գույքի պարտադիր հայտարարագրման կամ եկամուտների ծագման օրինականության հիմնավորում պահանջող օրենքները:

Վարկերին կապակցված եւ վերահսկելի բարեփոխումները երրորդ աշխարհի ու ԱՊՀ երկրներում, այդ թվում եւ Հայաստանում, մեծ պարտքեր առաջացնելով, միջազգային վարկային կազմակերպությունների կողմից քաղաքական կախվածություն, ուստի եւ հնազանդ կեցվածք են ձեւավորում:

Այսօր մեր տնտեսությունը, պատկերավոր ասած, վեր է ածվել մի «թմրամոլի», որի համար արտաքին վարկերի տեսքով տրվող թմրադեղի հերթական չափաբաժնի ուշացումը կարող է մահացու լինել ամբողջությամբ վերցրած հիվանդ տնտեսության համար: Թերեւս, ստեղծվել է մի իրավիճակ, երբ առաջին պլանում այլեւս ոչ թե բարեփոխումներն են, այլ նախկինում արվածի բացասական հետեւանքների ու հարուցած հիմնախնդիրների շտկումը:

Չնայած ներկայումս երկրում արտադրվող համախառն ներքին արդյունքի ավելի քան երեք քառորդը ստեղծվում է սեփականաշնորհված մասնավոր հատվածի կողմից, սակայն դա այնքան փոքր է, որ կենսամակարդակի շոշափելի աճի խնդիր չի լուծում: Ավելին վարվող տնտեսական քաղաքականության պայմաններում նոր սեփականատերերի կողմից ավելի ծեռնտու ու հեշտ է համարվում իրենց սեփականության մաս-մաս վաճառքը, քան թե նրա հետեւողական ու երկարաժամկետ նորացումը:

Առկա խնդիրներից ելնելով թերեւս, հարկ է նախ առողջացնել երկրի «հիվանդ» ֆինանսական համակարգը, այն ազատել անհույս պարտքերի ու չվճարումների ծանր բեռից: Այս առումով տարիմաստ վիճակ է ստեղծվել. տնտեսության մեջ պարտքերի ու փոխադարձ չվճարումների ընդհանուր գումարն ավելի մեծ է, քան պետական բյուջեն: Եվ այս բացասական միտումը շարունակում է խորանալ: Նման վիճակը որոշ փորձագետների նույնիսկ հիմք է տալիս պնդելու, որ մինչեւ հաջորդ տարվա կեսերը երկրի ֆինանսական համակարգը կհայտնվի դեֆոլտի, այսինքն բյուջետային սնանկության մեջ:

Շ.Մ.

Նոր պալատ

Ապրիլի 19-ին Երեւանի «Թեքեյան» կենտրոնում հանրապետության մարզերի առեւտրաարդյունաբերական պալատների (ԱԱՊ) 72 պատվիրակների մասնակցությամբ կայացավ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի հիմնադիր համագումարը: Ըստ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության օրենսդրության ու իրավաբանական վարչության պետ Զոհրակ Հովհաննիսյանի, պատվիրակների թիվը որոշվել է «Առեւտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքի նախահանձած՝ մարզային պալատների հիմնադիր 10 անդամներից 1 պատվիրակ համամասնությամբ:

Զ. Հովհաննիսյանի տվյալներով, Երեւանի ԱԱՊ-ի հիմնադիր անդամ են դարձել շուրջ 230 տնտեսվարող սուբյեկտ, Կոտայքում 52, Սյունիքում 51, Վայոց ձորում եւ Արագածոտնում 48-ական, Տավուշի եւ Գեղարքունիքի պալատներից յուրաքանչյուրում հիմնադիրներ են 60-ից, իսկ Արմավիրում եւ Լոռիում 30-ից ավելի, Արարատի մարզում 36 եւ Շիրակում 53 տնտեսվարող սուբյեկտ: Նա հատկապես կարեւորեց մարզային ԱԱՊ-ների հիմնադիր համագումարներին տնտեսվարող սուբյեկտների ակտիվ մասնակցությունը նկատի ունենալով, որ, անկախ ծյուղային պատկանելությունից, գործարար համայնքի շահերն արտահայտող անկախ կառույցների ստեղծումը կնպաստի մարզերում ձեռնարկատիրության զարգացմանը եւ Երեւանի առեւտրաարդյունաբերական կենտրոնի հետ կոոպերացիայի ընդլայնմանը: Նախարարության պաշտոնյայի խոսքերով, Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի հիմնադիր համագումարի հյուրերը կլինեն ՀՀ կառավարության, Ազգային Ժողովի եւ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Մի աղբաղուլի պատմություն

ԷԴԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Իջեւան քաղաքի առօրյա հոգսերը ներկայացնող մեր նախորդ հրապարակման մեջ (տե՛ս «Երկիր», թիվ 5, 22-28 փետրվարի, 2002 թ.) մենք ձեռնպահ էինք մնացել աղբահանության խնդիրներն արծարծելուց: Դա բացատրվում էր նաեւ այն հանգամանքով, որ քաղաքի բարեհամբույր տեսքն ու աշխույժ փողոցները ավելի շատ լավը տեսնելու տրամադրություն էին ստեղծում: Այսօր էլ մաքրության տեսակետից Իջեւանը վերջին տեղեր չի զբաղեցնում, եւ թվում է՝ աղբահանության խնդիրն իրոք լուծված է: Բայց...

2000 թ. փետրվարից այդ հոգսն ամբողջությամբ ընկած է քաղաքապետարանի ենթակայության «Բարդի» ՓԲԸ ուսերին, որն իր «Զիլ» մակնիշի միակ մեքենայով արդեն երկու տարի է՝ իրականացնում է աղբահանության գործը: Ինչպես է դա հաջողվում, ուժերի ինչպիսի գերլարումով՝ դժվար է ասել, քանզի Իջեւանում նույնպես կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրումը զգալիորեն հետ է մնում կատարվող աշխատանքներից: Բնական է, որ այս իրավիճակում քաղաքապետարանը ստիպված է բյուջետային սուղ միջոցներից ավելացնել ընկերության ֆինանսավորումը:

ՀՀ կառավարության 1997 թ. նոյեմբերի 5-ի թիվ 486 որոշումից հետո, որով քաղաքապետարանի ենթակայության կոմունալ ծառայության համակարգը սեփականաշնորհվեց, եւ նրա բազայի վրա ստեղծվեց «Իջեւան կոմունալ ծառայություն» ԲԲԸ-ն, ոչ ոք չէր կարող ենթադրել, որ ընդամենը երկու տարի անց քաղաքը կանգնելու է կոտրած տաշտակի առաջ:

Համակարգի՝ «Քաղաքը մեր տունն է» կարգախոսը նորաթուխ ընկերության ղեկավարների (տնօրեն՝ Ա. Մարդանյան) կողմից մի կողմ նետվեց, ու զարմանալի արագությամբ մեջտեղ եկավ «Աղբի վարձավճարը կտա՞ք՝ կտանենք, չե՞ք տա՝ աղբը այնքան կմնա, մինչեւ վճարեք» սկզբունքը: Եվ սա այն դեպքում, երբ ներկայումս հավաքագրվող 50-60 հազար դրամի փոխարեն, ընկերությունը կարողանում էր հավաքագրել 150-200 հազար դրամ:

Չընդունելով սեփական ապաշնորհությունը՝ «Իջեւան կոմունալ ծառայություն» ԲԲԸ-ն դիմել է նաեւ ինքնաարտահայտման մի յուրահատուկ ձեւի՝ 1999-ի դեկտեմբերին աղբաղուլ է հայտարարել՝ իջեւանցիներին ամանորյա նվեր մատուցելով:

Միշտ էլ նման աղմկարարությունների հետեւում առավել կարեւոր գործեր ու գործարքներ են թաքցվում, որոնք հանցանք համարելը երբեմն մեղմ է թվում: Ներկա պարագայում Ա. Մարդանյանի ենթակայության ԲԲԸ-ն, օգտագործելով հարմար առիթը, չկատարելով ոչ մի ներդրում, սկսել է փոշիացնել սեփականաշնորհման արդյունքում իր ձեռքում հայտնված տեխնիկական բազան: Դուրս է գրել եւ օտարել նախկինում համակարգին պատկանող 16 միավոր մեքենասարքավորում՝ այդ թվում տարբեր մակնիշի եւ նշանակության 10 բեռնատար եւ երկու «Բելառուս» մակնիշի տրակտոր: Եղածը ծախսելուց հետո, 2000 թ. փետրվարի 24-ին ԲԲԸ տնօրինությունը ընդառաջ է գնացել քաղաքապետարանի առաջարկին՝ աղբահանության աշխատանքների կազմակերպումը հանձնել «Բարդի» ՓԲԸ-ին: Սիրահոժար ընդունելով առաջարկը՝ Ա. Մարդանյանը, սակայն, հրաժարվել է քաղաքապետարանին հաշվետվություն ներկայացնել ընկերության մեքենասարքավորումների վաճառքի, դուրսգրման, օտարման եւ առհասարակ ընկերության հաշվեկշռի մասին: Հրաժարվելու պատճառներ, եւ այն էլ՝ հիմնավոր, հավանաբար կան, բայց կա նաեւ սեփական ընկերության կանոնադրության 7-րդ դրույթը (բաժնետերերի իրավունքները եւ պարտականությունները), որով նա ուղղակի պարտավոր է հաշվի նստել բաժնետոմսերի 34 տոկոսը վերահսկող քաղաքապետարանի հետ:

Քաղաքապետարանն այնքան էլ մեծ հույսեր չի փայփայում եւ աղբահանությունն իրականացնելու, նոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ առայժմ բանակցություններ է վարում մի շարք հայրենական եւ օտարերկրյա կազմակերպությունների հետ: Ի՞նչ արդյունքներ կտան այդ բանակցությունները՝ դժվար է ասել, բայց որ վաղուց ժամանակն է հախուռն սեփականաշնորհումների պատմությանը մի հետադարձ հայացք գցել՝ արդեն իսկ անառարկելի է: Իջեւանի մասնավոր օրինակը հենց դրա ապացույցն է:



Ապակենտրոնացումն անհրաժեշտ է

Ապրիլի 16-ին Ազգային ժողովում ՀՅԴ պատգամավորական խմբակցությունը հանդես եկավ հայտարարությամբ.

«Եվ աշխարհի, եւ վերջին տարիների մեր փորձը ապացուցում է, որ իշխանության ապակենտրոնացումն անհրաժեշտություն է: Մեր քաղաքների ու գյուղերի զարգացումը, մեր երկրի լիարժեք կայացումը հնարավոր չէ առանց տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների, ֆինանսական միջոցների ընդլայնման:

Տեղական ինքնակառավարման նոր օրենքի նպատակն այս էր: Հիշեցնեմ, որ առաջին ընթերցմամբ մենք այն ընդունել ենք չորս ամիս առաջ:

Օրենքի նախագիծը շուրջ երկու տարի քննարկվել է բոլոր մակարդակներում: Ազգային ժողովում լսումներ են անցկացվել:

Կարծես ամեն ինչ բնական հունով էր ընթանում, սակայն օրենքի երկրորդ ընթերցմամբ ընդունման ձգձգումը եւ կառավարության ծավալուն առաջարկությունների բնույթը մտահոգիչ են:

Մեր գնահատմամբ, եթե օրենքն ընդունվի՝ ներառելով կառավարության բոլոր փոփոխությունները, ապա մենք համակարգի բարեփոխում չենք ունենա:

Այսինքն համայնքներին նոր լիազորություններ չեն տրվի, ինչը կծախսողի իշխանությունը քաղաքացուն առավել մոտեցնելու նպատակը: Այսինքն համայնքների ֆինանսական համակարգը չի ամրապնդվի, նրանց սեփական միջոցները չեն ընդլայնվի, իսկ դա կծախսողի համայնքային կյանքի աշխուժացման նպատակը:

Մեզ համար անվիճարկելի է նաեւ, որ չի կարելի օրենքի բովանդակությունը, ուղղվածությունը փոխել: Այս մտահոգությունը մեր խմբակցությունը փոխանցում է հանրապետության նախագահին եւ կառավարությանը: Մեր կարծիքով՝ պետության լիարժեք կայացման համար իշխանության ապակենտրոնացումը անհրաժեշտություն է»:

ԱՀԱԶԱՆԳ

Հե՛տ փուր սեփականությունդ

Ապրիլի 16-ին կառավարության նստավայրի դիմաց բողոքի ցույց էին կազմակերպել Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի բնակիչները: Նրանց պահանջը առաջին հայացքից տարօրինակ էր, որովհետեւ անկարելի էր թվում անարդարության չափը:

Գյուղն ունի 120 հա սեփականաշնորհված եւ մոտ 200 հա ֆոնդային հող, որը վարձակալական հիմունքներով օգտագործման է տրված Ծովակի բնակիչներին: Ըստ գյուղացիների, ինչ-որ մեծահարուստ ցանկանում է տիրանալ ամբողջ 320 հա հողատարածքին, այսինքն՝ ձեռք բերել ոչ միայն գյուղացիներին վարձակալության տրված, այլեւ 1992 թվականից սեփականաշնորհված հողը:

Եվ դրան հասնելու համար Գեղարքունիքի մարզային կառույցները հայտարարել են ապրիլի 26-ին անցկացվելիք աճուրդի մասին: Գյուղացիները չեն հասկանում, թե ինչպե՞ս կարելի է աճուրդի հանել իրենց սեփականությունը:

Տարօրինակ է, որ մինչ օրս Ծովակ գյուղի բնակիչները չեն ստացել սեփականության վկայագիրը՝ «հողի անձնագրերը»: Բացի այդ, ծովակցիները դժգոհ են նաեւ վարձակալած հողերի աճուրդից, որովհետեւ հասկանալի է, որ չեն կարող աճուրդում մրցակցության դիմանալ: Ինչ որ է, ցույցի եկած ծովակցիներին սկզբում ընդունեց կառավարության վարչություններից մեկի շարքային մի չինովնիկ: Սա չէր կարող գոհացնել գյուղացիներին, որովհետեւ հասցրել էին լինել շատ ավելի բարձր ինստանցիաներում, սակայն չէին լսել հուսադրող որեւէ խոսք: Ի վերջո, ծովակցիներին ընդունեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Նրա աշխատասենյակից գյուղի 4 հոգանոց պատվիրակությունը դուրս եկավ փոքր-ինչ գոհացած, որովհետեւ վարչապետը խոստացել էր, որ գոնե առաջիկա աճուրդին, գոնե սեփականաշնորհված հողերը աճուրդի չեն դրվի:

Իսկ թե հետո ինչ կլինի ծովակցիները չգիտեն, որովհետեւ նրանց ոչինչ ավելին չի խոստացվել:

Արտակարգ արձակուրդներ

ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ պատգամավորական խմբակցության Գեղարքունիքի մարզ կատարած այցելության արդյունքների հրապարակման մեջ մենք արձանագրել էինք Ճամբարակի ենթաշրջանի Գետիկ գյուղի միջնակարգ դպրոցի օրհասական վիճակը: Տիպային շենքը, որ դեռեւս անցյալ տարվա նոյեմբերից փոթորկի պատճառով գրեթե առանց տանիքի է մնացել, տեւական անձրեւներից վերջնականապես անօգտագործելի է դարձել: Տնօրինությունը, ստիպված, ապրիլի 15-ից դադարեցրել է պարապմունքները կարեւորելով առաջին հերթին երեխաների ապահովությունը:

Նշել էինք նաեւ, որ պետական բյուջեից 4 մլն 620 հազար դրամ է հատկացված տանիքի վերանորոգման համար, բայց, ինչպես մեզ տեղեկացրին, այդ գումարը հնարավոր կլինի ստանալ միայն ամռանը, երբ բանը բանից անցած կլինի: Արդեն իսկ պարզ է, որ այդ միջոցները չեն բավարարի դպրոցի հիմնավոր վերանորոգման համար: Ասում ենք հիմնավոր, որովհետեւ արդեն թափվել է երկրորդ հարկի առաստաղի ծեփը, խոնավությունից քանդվել է մանրահատակը:

Հուսով ենք, որ գոնե այս ահազանգից հետո համապատասխան մարմիններն ու կազմակերպությունները վերջապես տեղից կշարժվեն ու նաեւ այս օրինակով կհասկանան, որ արտակարգ իրավիճակներում ի հայտ են գալիս առաջնահերթ լուծելիք խնդիրներ, որոնց հետաձգումը նույնն է, թե էշին ասես մի սատկի, գարուն է գալու:

Սեփ. լր.

Բռնությունները վկայող տվյալներ կա՛ն

«Հոկտեմբերի 27»-ի գործով դատաքննությանը զուգահեռ, հանրապետական դատախազությունը քննություն է իրականացնում սույն գործով նախաքննության ընթացքում կիրառված խորթ մեթոդների ուղղությամբ, իսկ զինդատախազությունը շարունակում է անջատված մասով նախաքննությունը: Որքանո՞վ է սա արդյունավետ, եւ որքանո՞վ են անջատված մասով քննությանը նպաստում դատարանում հնչած ցուցմունքները: Այս հարցերի շուրջ պարզաբանումներ է տալիս ՀՀ զինդատախազության քննչական բաժնի ղեկավար ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

- Վռամ Գալստյանի դատաքննական ցուցմունքների մասնավորապես ո՞ր դրվագներն էին նախաքննական մարմնի համար նորություն, որ դրանց արձանագրությունը պահանջել եք դատարանից:

- Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում ամբաստանյալ Վռամ Գալստյանի տված ցուցմունքները, ինչպես Ձեզ արդեն տեղեկացրել եմ, իրոք, մեր կողմից պահանջվել են: Իսկ թե նրա ցուցմունքների կոնկրետ ո՞ր հատվածն է մեզ հետաքրքրել՝ թույլ տվեք այս պահին չհայտնել, բայց միանշանակ է, որ դրանք իրենց մեջ նոր հանգամանքներ պարունակում են: Այս մասին կհայտնեմ Վռամ Գալստյանի ցուցմունքների արձանագրությանը ծանոթանալուց հետո:

- Նախկինում պահանջել էիք նաեւ Նաիրի Բաղալյանի եւ Արմեն Հարությունյանի վերաբերյալ դատարանում հնչած ցուցմունքները: Արդյո՞ք դրանք նպաստեցին անջատված մասով իրականացվող նախաքննությանը, եւ որքանո՞վ է հավանական, որ, ի հաշիվ նշված անձանց, ավելանա հնարավոր մեղսակիցների թիվը: Անցած 1-2 ամիսները բավարար չե՞ն եղել այդ ցուցմունքներն ուսումնասիրելու եւ գնահատելու համար:

- Այո, մեր խնդրանքով նշված անձանց վերաբերող ամբաստանյալների ցուցմունքների արձանագրությունները մեզ ուղարկվել են, եւ դրանք մեր կողմից արդեն իսկ ուսումնասիրվել են: Բայց քանի որ ոչ բոլոր ամբաստանյալների ցուցմունքների արձանագրություններն են ստացվել քննչական բաժնում, ուստի այս պահին դեռ ոչ մի եզրահանգման չենք եկել:

- Բայց համառորեն շարունակում են պտտվել այն լուրերը, որ քննչական խմբում այսօր քննարկման առարկա է դարձել Նաիրի Բաղալյանի մասով քր. գործը կարճելու մասին որոշման վերացումը:

- Չեմ կարող ասել, թե այդ լուրերը տարածողները ինչ նպատակ են հետապնդում, սակայն հստակ կարող եմ պնդել, որ այսօրվա դրությամբ որեւէ հետեւության դեռ չենք հանգել, քանզի, ինչպես արդեն նշեցի, պահանջված ոչ բոլոր արձանագրություններն են ստացվել, հետեւապես նաեւ՝ ուսումնասիրվել:

- Պարոն Հարությունյան, արդեն մեկ տարի ինը ամիս է, ինչ անջատված մասով ընթանում է նախաքննություն, սակայն ցայսօր կոնկրետ որեւէ բան չի հայտարարվում. չկա հնարավոր մասնակիցների կամ գոնե կասկածյալների ինչ-որ շրջանակ, չկան նաեւ հերքված վարկածներ: Անցած ժամանակահատվածը բավարար չէ՞ր գոնե մեկ վարկածի ուղղությամբ լիարժեք քննություն տանելու համար, թե՞ արդարացված են այն տեսակետները, որ առաջ քաշված որեւէ վարկած իրականում գոյություն չունի, եւ իրականացվում է հընթացս քննություն:

- 2000 թ. հուլիսի 11-ի որոշմամբ, 1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ նիստերի դահլիճում Ն.Հունանյանի եւ մյուսների կողմից կատարված տեռորիստական ակտի փաստի առթիվ հարուցված քրեական գործից անջատված մասով ներկայումս էլ նախաքննությունը շարունակվում է: Նախաքննության ընթացքում այս կամ այն հանգամանքի պարզաբանման նպատակով, քննչական գործողությունների կատարմանը զուգահեռ, օպերատիվ խմբի կողմից իրականացվում են նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Վարկածներ իրոք առաջ են քաշվել ու ստուգվում են, եւ եթե այսօրվա դրությամբ որեւէ վարկած չի հերքվել, դա դեռ չի ենթադրում, որ հընթացս քննություն է կատարվում:

- Քննության ընթացքում կատարված ֆիզիկական բռնությունների մասին Հ. Հարությունյանի եւ Ն. Բաղալյանի հայտարարությունների հիման վրա ՀՀ դատախազությունն իրականացնում է նախաքննություն: Բայց, որքանով գիտեմ, այդօրինակ փաստերի մասին վկայող, այսպես կոչված՝ օպերատիվ տեղեկությունների տիրապետել է նաեւ զինդատախազությունը, սակայն այդ ուղղությամբ որեւէ քննություն, թեկուզեւ ծառայողական, չի կատարել: Ինչո՞ւ, եւ արդյո՞ք դրանք տրամադրել եք հանրապետական դատախազությանը:

- Սկսեմ նրանից, որ Նաիրի Բաղալյանի կողմից ԶԼՄ-ներով տարածված տեղեկությունների կապակցությամբ նախկինում նյութեր նախապատրաստվել են, եւ դրանցով ժամանակին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ինչ վերաբերում է նրան, թե մեր կողմից ՀՀ գլխավոր դատախազությանը այս պահի դրությամբ ինչ փաստաթղթեր են տրամադրվել ինչ փաստերի վերաբերյալ՝ թույլ տվեք չպատասխանել:

- Գուցե այն պատճառով, որ դրանց մասնակցություն են ունեցել նաեւ զինդատախազության քննիչնե՞րը, որոնցից մի քանիսի օրինակ՝ Ս. Հովհաննիսյանի, Խ. Ղալթախչյանի ծերբակալության հարցը, ըստ լուրերի, հնարավոր է՝ առաջիկայում բարձրացվի:

- Բազմիցս առիթ ունեցել եմ նշելու, որ բացառում եմ քննչական խմբի անդամների կողմից որեւէ մեկի նկատմամբ բռնության գործադրումը:

Հ.Գ. Ինչպես արդեն տեղեկացրել ենք, զինդատախազությունը Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանից խնդրել էր նաեւ ԱԺ 1999 թ. հոկտեմբերի 27-ի նիստի ՀԱՀ-ի տեսագրության բնօրինակը՝ փորձաքննության ենթարկելու համար, սակայն դատարանը երեկ որոշեց չընդառաջել զինդատախազությանը եւ չտրամադրել բնօրինակը, քանզի այն դեռ չի հետազոտվել դատարանի կողմից: Փոխարենը՝ որոշվեց հարցում կատարել հանրային հեռուստատեսությանը՝ պարզելու գործով վկա լրագրող Տիգրան Նազարյանի գտնվելու վայրը:

Հասարակությանը ձեռնոց է նետվել

Տասնյակ անձանց սպանությունները կազմակերպելու մեջ մեղադրվող Վանո Սիրադեղյանին քաղաքական թափերաբեմ վերադարձնելու՝ ՀՀՇ վարչության ջղաձիգ փորձերը հերթական անգամ մատնվեցին անհաջողության: Ու հերթական անգամ ՀՀՇ-ն, հավատարիմ մնալով իր անցած ուղուն, կարծես թե չի պատրաստվում պատվով ընդունել այդ պարտությունը: Վկան՝ Վ. Սիրադեղյանին որպես պատգամավորության թեկնածու գրանցելու մասին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանին ՀՀՇ-ի ներկայացրած հայցը:

Մինչդեռ թվում էր, թե վերջին ժամանակներս օրինականության եւ արդարադատության հավատարիմ պաշտպանի կերպարի մեջ մտած ՀՀՇ-ն լռելյայն պետք է ընդուներ Սիրադեղյանի թեկնածության գրանցման հարցը ընդհանրապես քննարկման առարկա չդարձնելու Տավուշի մարզային ընտրական հանձնաժողովի որոշումը, քանզի նրա թեկնածության գրանցման համար ՄԸՀ-ին չէր ներկայացրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Մասնավորապես վերջին 5 տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը, ինչը անհրաժեշտ պայման է համարվում նաեւ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով: Բայց ոչ, Վանո Սիրադեղյանի թեկնածության գրանցման հարցը ՀՀՇ-ն վեր է դասում բոլոր տեսակի օրենսդրական պահանջներից ու ակնկալում դատարանի միջոցով հասնել իրենց նպատակին:

Իհարկե, չենք բացառում, որ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը կայացնի օրենքից չբխող որոշում: Ճիշտ այնպես, ինչպես Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը որոշեց պարտադրել ՆԳՆ անձնագրային վարչությանը տալ տեղեկանք այն մասին, թե Վանո Սիրադեղյանը մինչեւ 2000 թվականի ապրիլի 4-ը մշտապես բնակվել է Հայաստանում. կարծես 1999 թվականին այդ Վանո Սիրադեղյանը չէր ամիսներ շարունակ գտնվում փախուստի մեջ խուսափելով արդարադատությունից, չմասնակցելով անգամ իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասին ՀՀ դատախազության երկրորդ միջնորդության Ազգային ժողովում 1999 թվականի փետրվարին ծավալված քննարկումներին: Եվ այդ նա չէր, որ հանրապետություն վերադարձավ միայն իբրեւ պատգամավորության թեկնածու գրանցվելուց հետո:

Բայց, անկեղծ ասած, զարմանում ենք ՀՀՇ վարչության ցինիզմի վրա, որ փորձում է կրկնել մեկ անգամ արդեն կիրառված սցենարը: Թեեւ այդ քայլը կարելի է որակել նաեւ մարտահրավեր ուղղված ոչ այնքան արդարադատությանը, որքան իշխանություններին, որով կարծես ցանկանում է ցույց տալ, թե իրենք շարունակում են իշխել Հայաստանում, եւ իրենց որոշելիքն է որ սպանությունները պետք է բացահայտվեն, որոնք ոչ, որ մարդասպանները պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության, իսկ ովքեր ոչ, ով պետք է ընտրվի պատգամավոր, ով ոչ, երբ պետք է կիրառվեն օրենսդրության պահանջները, իսկ երբ ոչ: Մի խոսքով թե ո՞ւմ ձեռքում է իրական իշխանությունը: Իսկ ցավալին այն է, որ ներկայիս իշխանավորները, ուզեն թե չուզեն, պետք է վերցնեն նետված ձեռնոցը եւ գործեն պարտադրված խաղի կանոններով, ինչի ելքն էլ կնախանշի Հայաստանի եթե ոչ ապագան, ապա գոնե 2003 թվականին կայանալիք ընտրությունների արդյունքները, նաեւ թե որքանով են արդարացված իրավական պետություն ունենալու մեր սպասումները:

U. S.

Դարձյա՞լ դուրս կգան ցույցի

Գիտությունների ազգային ակադեմիայի արհեստակցական կազմակերպությունների միության խորհուրդը պատրաստվում է ապրիլի 22-ին ակադեմիայի նախագահության շենքի առջեւ կազմակերպել հերթական բողոքի ցույցը, քանի որ արդեն 5 ամիս է՝ համակարգի աշխատողները աշխատավարձ չեն ստացել:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ

Ինչպես հայտնի է, այս տարի առաջին անգամ գիտության ֆինանսավորման համար սահմանվել է նոր կարգ, ըստ որի ֆինանսավորումը պետք է իրականացվի ոչ թե ԳԱԱ նախագահության միջոցով, այլ ուղղակիորեն գիտական թեմաների ղեկավարների ու պետության (ի դեմս ԿԳՆ-ի) միջեւ կնքված պայմանագրի համաձայն: Սակայն գիտաշխատողների կարծիքով, կառավարությունն իրականում գումար չունի իրենց տալու եւ նոր կարգ մտցրեց ֆինանսավորման ուշացումը կազմակերպչական խնդիրներով պատճառաբանելու համար: Ֆինանսավորման նոր կարգի անցնելուց զատ, գիտության համակարգի հիմնարկները եւս, ի թիվս կրթության ու մշակույթի ոլորտների մի շարք հիմնարկների, այժմ, պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին օրենքի համաձայն, վերակազմակերպվում են եւ ստանում իրավաբանական նոր կարգավիճակ: Ըստ այդմ, քանի որ հիմնարկները ներկայումս նոր կանոնադրություն հաստատելու, առանձին հաշվեհամարներ բացելու գործընթացում են, նրանց ֆինանսավորումն առժամանակ խոչընդոտվել է: Բայց գիտաշխատողների համար այս պատճառաբանությունները նույնպես անընդունելի են. նրանք մատնանշում են իրավաբանական նոր կարգավիճակի անցման փուլում գտնվող ԳԱԱ նախագահության օրինակը, որն առանց որեւէ խնդրի ժամանակին ֆինանսավորվում է: Բացի այդ, ֆինանսավորման ուշացման հարցը լուծելու նպատակով կառավարությունը նախորդ շաբաթ որոշում է ընդունել, մինչ գիտական հիմնարկների վերակազմակերպման գործընթացի ավարտը, նրանց ֆինանսավորել հին կարգով, սակայն դարձյալ գումար չեն փոխանցում: Ուստի ցույցի պատրաստվող ԳԱԱ աշխատակիցները վստահ են, որ վերստին անուշադրության է մատնվում «շարքային գիտաշխատողը», որն այսօր եկամտի այլ աղբյուր չունի, բացի իր խղճուկ աշխատավարձից:



Ինչեւէ, օրերս կայացած կառավարության նիստում դարձյալ բարձրացվել է ԳԱԱ համակարգի ֆինանսավորման խնդիրը: Որոշվել է առաջիկա երկու օրվա ընթացքում տալ գիտության աշխատողների աշխատավարձի 2 ամսվա պարտքը, իսկ եւս երկու ամսվանը վճարել մինչեւ ապրիլի վերջը:

Սակայն, ինչպես ճշտեցինք, կառավարության հիշյալ որոշումը գիտաշխատողներին առանձնապես չի ոգեւորել, քանի որ դեռ հարց է այն նշված ժամկետներում կկատարվի՞, թե՞ ոչ: Այսպես թե այնպես, նրանք պատրաստվում են դուրս գալ ցույցի, կամ եթե ցույցն արգելվի, ԳԱԱ նիստերի դահլիճում ժողով կգումարվի, որտեղ կքննարկվի գիտության համակարգի աշխատողների սոցիալական պաշտպանվածության վիճակը եւ գիտության ֆինանսավորման քաղաքականության հարցը:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ 2002 Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՏՈՄՍԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

Աշխարհագրության քննական հարցատոմսի տարբերակ

1. (3 միավոր)
Ամերիկային Միացյալ Նահանգներ
ա) աշխարհագրական դիրքը, տարածքը, սահմանները
բ) բնական պայմանները
գ) ռեսուրսները

2. (3 միավոր)
Երկրաշարժ
ա) հասկացություն երկրաշարժի մասին, առաջացման պատճառները
բ) աշխարհի երկրաշարժավտանգ շրջանները
գ) երկրաշարժից պաշպանվելու ձեւերը

3. (2 միավոր)
ՀՀ անասնապահությունը
ա) մասնագիտացումը
բ) տեղաբաշխումը

4. (1 միավոր)
Որո՞նք են երկրագնդի ամենատաք եւ ամենացուրտ վայրերը: Ո՞րն է դրանց գոյացման պատճառը:

5. (1 միավոր)
Ի՞նչ է ունիտար պետությունը, բերել օրինակներ:

6. (1 միավոր)
Ընտրել եւ դուրս գրել տափաստանային բնական զոնային բնորոշ չորս բուսատեսակ.
կակտուս, կեչի, օշինդր, փետրախոտ, ուղտափուշ, քարաքոս, շյուղախոտ, մայրի, կաղնի, օշան, տիպչակ, սիզախոտ

7. (1 միավոր)
Ընտրել եւ դուրս գրել Գեղարքունիքի մարզի չորս քաղաք.
Ալավերդի, Արմավիր, Հրազդան, Սիսիան, Գավառ, Գորիս, Վարդենիս, Իջեւան, Ճամբարակ, Տաշիր, Մարտունի, Դիլիջան:

8. (1 միավոր)
Բնական ո՞ր զոնաներն են բացակայում Աֆրիկայում եւ ինչու՞:

9. (1 միավոր)
Ի՞նչ սկզբունքներ են հաշվի առնվում սեւ մետաղածուլական ձեռնարկությունները տեղաբաշխելիս (Ռուսաստանի Դաշնության օրինակով):

10. (1 միավոր)
Աֆրիկայում է գտնվում աշխարհի ամենաերկար ———— գետը, որի վրա կառուցված է ———— ջրամբարը: Գետը թափվում է ———— ծով առաջացնելով ————, որտեղ կան բազմաթիվ գետային նավահանգիստներ:

11. (1 միավոր)
Մեքենաշինությունը ՀՀ մասնագիտացման առաջատար ճյուղերից է եւ մինչեւ ճգնաժամը հիմնականում տնտեսական ցուցանիշներով գրավում էր ———— տեղը: Նրան բաժին էր ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալի ————: ՀՀ մեքենաշինական համալիրի ամենազարգացած ենթաճյուղը ———— արդյունաբերությունն էր, որի խոշոր կենտրոնը ———— քաղաքն էր:

12. (1 միավոր)
Երկու քաղաքներ գտնվում են միեւնույն միջօրեականի հս.լ. 25°-ի եւ հվ.լ. 40°-ի վրա: Որոշել դրանց միջեւ եղած հեռավորությունը աստիճաններով եւ կիլոմետրերով:

13. (1 միավոր)
Առաջին երկրում ավտոտրանսպորտով փոխադրվող բեռների ծավալը 8 մլն տ է, բեռնափոխադրումների միջին հեռավորությունը 400 կմ: Երկրորդ երկրում այդ ցուցանիշները կազմում են, համապատասխանաբար, 20 մլն տ եւ 240 կմ: Որոշել, թե ո՞ր երկրի ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունն է ավելի մեծ:

14. (1 միավոր)
Տետրում գրել թվերով նշված օբյեկտների անունները.
1,2 – լեռնաշղթա, 3,4 – լիճ, 5,6 - գետ, 7,8 – քաղաք:



15. (1 միավոր)
Տետրում գրել թվերով նշված օբյեկտների անունները.
1,2 – լեռնագագաթ, 3 – նեղուց, 4 – ջրանցք, 5,6 – պետություն, 7,8 - անապատ:



ОБРАЗЕЦ ЭКЗАМЕНАЦИОННОГО БИЛЕТА УСТНОГО ЭКЗАМЕНА ПО РУССКОМУ ЯЗЫКУ И ЛИТЕРАТУРЕ

1. *Мотивы лирики С. Есенина (в рамках предложенной Программы).*
2. *Прочитать и пересказать (с элементами анализа) незнакомый текст (текст предлагается экзаменатором).*
3. *Синтаксический и морфологический разбор предложения.*

Ответ оценивается следующим образом:

· за первый вопрос максимальная оценка- пять баллов,

· за второй вопрос максимальная оценка- пять баллов,

· за третий вопрос максимальная оценка- десять баллов.

ВАРИАНТ ДИКТАНТА

В оранжерее графа происходила распродажа цветов. Покупателей было немного: я, мой сосед и молодой купец, торгующий лесом. Пока работники выносили наши великолепные покупки и укладывали их на телеги, мы сидели у входа в оранжерею и беседовали. В теплое апрельское утро сидеть в саду, слушать птиц и видеть, как вынесенные на свободу цветы нежатся на солнце, чрезвычайно приятно.

Укладкой растений распоряжался сам садовник, почтенный старик с полным бритым лицом, в меховом жилете. Он все время молчал, но прислушивался к нашему разговору и ждал, не скажем ли мы чего-нибудь нового. Это был умный, очень добрый, всеми уважаемый человек. Все почему-то считали его немцем, хотя по отцу он был швед, по матери русский и ходил в православную церковь. Он знал по-русски, по-шведски и по-немецки, много читал на этих языках. И нельзя было доставить ему большего удовольствия, как дать прочитать какую-нибудь новую книжку или поговорить с ним. Были у него слабости, но невинные. Так, он называл себя старшим садовником, хотя младших не было. Выражение лица у него было необыкновенно важное и надменное. Он не допускал противоречий и любил, чтобы его слушали серьезно и внимательно.

Անգլերեն լեզու

Հարցարանի նմուշ ոչ մասնագիտական ֆակուլտետների համար

I. Կարդալ տեքստը եւ պատասխանել հարցերին՝ ընտրելով առաջարկված տարբերակներից ճիշտը:

One evening last week John and Mary were sitting quietly at home. She was watching the television and he was reading a book. Suddenly they heard a loud bang. John supposed that the old lady in the above theirs was moving the furniture about. Mary was afraid that the noise would wake the baby. She turned down the television and a moment later they heard someone calling for help.

John ran upstairs. The old lady's door was shut but he could see smoke coming through the letter-box and under the door and could smell something burning. "The flat is on fire," he shouted to his wife. "Ring the fire brigade."

John banged on the door but the old lady took a long time to answer and he was turning over in his head the idea of breaking the door down when she finally appeared.

"I was having a bath," she said, "when the water heater in the kitchen blew up."

"Why didn't you open the door?" he asked her.

"I was getting dressed when you knocked," she said, looking embarrassed.

1. Last week John and his wife
a) were having a quiet evening at home
b) were watching TV together
c) were reading an interesting detective story together
2. Mary was afraid because
a) she thought the flat above was on fire
b) she heard the lady upstairs calling for help
c) she thought the baby would not sleep through all that noise
3. John knew the flat was on fire because
a) he heard the lady calling for help
b) he noticed smoke coming under their neighbour's door
c) the fire-brigade arrived
4. Why didn't the old lady open the door?
a) She was putting the fire out.
b) She didn't hear anybody knocking at the door.
c) She was not dressed.
5. Why did John want to break the door down?
a) There was no answer for a long time.
b) The old lady said that she was afraid to open the door.
c) The old lady shouted she could not open the door.

II. Ընտրել ճիշտ տարբերակը:

1. She gave me ... advice.
a) a b) the c) –
2. The secretary hasn't typed the letters ... .
a) never b) yet c) already
3. ... no one in the lecture hall.
a) It is b) There are c) There is
4. What will you ... when the doorbell rings?
a) do b) make c) perform
5. It was snowing ... when I woke up.
a) heavy b) hardly c) heavily
6. There is somebody walking behind us. I think _____ .
a) we are following b) we are being followed c) we are followed
7. The train _____ arrive at 11:30, but it was an hour late.
a) supposed to b) is supposed to c) was supposed to
8. I shan't go to the party unless you _____ with me.
a) don't come b) will come c) come
9. Don't worry _____ late tonight.
a) if I'm b) when am I c) when I'll be
10. Where _____? In London.
a) were you born b) are you born c) have you born

III. Փակագծում տրված բայերն օգտագործել ճիշտ ժամանակաձեւով:

1. John (to take) his family to the country last weekend and now (to be going) to visit them.
2. He (to be told) by the clerk that the workers (to have) their lunch.
3. She (to do) this work since she (to graduate) from the University.
4. She believed that it (to be) no use pretending that he (not to see) her.
5. I learned that she (to get) a parcel from her parents one of these days and (to be going) to tell her about it.

IV. Կատարել անհրաժեշտ փոփոխություններ.

ա) տրված նախադասությունները դարձնել հարցական
1. She had supper very late yesterday (General)
2. There has been an accident on the motor way. (Special)
3. John seemed to be very upset. (Disjunctive).
բ) նախադասությունները դարձնել կրավորական
1. One uses milk for making butter.
2. His friend must translate this article without dictionary.
3. I think, people will forget it very soon.
գ) Ուղղակի խոսքը դարձնել անուղղակի կամ հակառակը
1. "The weather is changing for the worse", the guide said. "It will be raining in a minute."
2. Mary asked, "Tom, when are shops closed on Saturday?"
3. "Don't leave your room at night", he said.
4. She'd like to know how much money there was in my bag.

V. Տրված բառերով կազմել նախադասություններ:

We, when, the, news, astonished, both, on, the, were, radio, heard, we.

Travel, people, When, they, lot, a, about, history, the, of, places, other, learn.

has, all, The, boy, things, needs, he, to repair, bicycle, his, the, necessary.

Mary, take, book, Didn't, a, on, the, History, library, from. yesterday?

have, He, didn't, time, to wash, and, breakfast, this, morning, to have.

VI. Թարգմանել անգլերեն:

Ուսուցչի թելադրած տեքստում բոլոր նախադասությունները հեշտ էին, բացի այդ մեկից:

Երբ ես Լոնդոնում լինեմ, ես շատ ժամանակ չեմ ունենա քաղաքի տեսարժան վայրերը դիտելու:

Գիշերն այնքան մութ էր, որ նավաստիները չէին կարող տեսնել ոչ ծովը, ոչ էլ երկինքը:

Քարտուղարուհին հարցրեց, թե ինչի համար են իրեն շնորհակալություն հայտնում: Դա իր պարտականությունն էր:

Երբ զբոսաշրջիկները հասան գյուղ, արեւն արդեն ծագել էր, եւ նրանք կարող էին հիանալ լեռնային լճի գեղեցկությամբ:

VII. Ավարտել նախադասությունները:

1. He didn't know that ———.--.
2. If the weather is nice ——.-.
3. Thought I didn't like the salad ——.
4. Whenever I ——.-.
5. ——— as soon as you get home.

VIII. Լրացնել բացթողումները տրված բառերի համապատասխան ձեւերով:

A traveller in South Africa once went — a long journey. When he was very far from home he saw a lion. The lion saw him at the same time, and began to follow him..

The man could not run away from the lion, as the lion could run — than he. So he thought of a plan to deceive him. When he came to a high rock he — himself behind it, so that the lion could not see him. Then, — a stick which he found among the —, he put his coat and his hat on it, — to make it look like a man. Then he put out the stick — thr rock behind which he has hidden. Soon the lion came to the rock. He saw the coat and the hat and he made a sudden jump — them. He jumped straight over the place where the man —, and falling down among the rocks, was killed. The traveller — and very soon he got home.

(to lie/ to hide/ above/ on/ to save/ fast/ to take/ so as/ at/ rock).

«Քիմիա - 2» տարբերակի նմուշ

1. Մոլեկուլները

1. նյութի քիմիապես բաժանելի մասնիկներ են,

2. նյութի քիմիապես անբաժանելի մասնիկներ են,

3. մասնիկներ են, որոնք կազմված են ավելի փոքր մասնիկներից միջուկներից,

4. մասնիկներ են, որոնցից կազմված են իոնական միացությունները:

2. Շոգիացման միջոցով կարելի է իրարից բաժանել հետեւյալ խառնուրդի բաղադրիչները.

1. ամոնիումի հիդրոքսիդի ջրային լուծույթ,

2. մրջնաթթվի ջրային լուծույթ,

3. կալիումի քլորիդի ջրային լուծույթ,

4. մրջնալդեհիդի սպիրտային լուծույթ:

3. Ֆիզիկական երեւույթ է

1. լուցկու այրումը,

2. պղտորության անհետացումը, երբ թարմ ստացված կալցիումի կարբոնատի սուսպենզիայի մեջ անցկացվում է ածխաթթու գազ,

3. ծավալի ընդարձակումը ջուրը սառույցի վերածվելիս,

4. պինդ նատրիումի հիդրոքսիդի վերածվելը փոշու օդում երկարատեւ մնալիս:

4. 20 գ NaOH լուծել են 80 գ ջրում: Որքա՞ն է լուծված նյութի զանգվածային բաժինը (%) լուծույթում.

1. 8, 3. 15,
2. 10, 4. 20:

5. Ի՞նչ ծավալով ջրածին կանջատվի 1 մոլ ջրի եւ 1 մոլ միավալենտ մետաղի փոխազդեցությունից.

1. 48, 3. 22,4,
2. 33,6, 4. 11,2:

Գրել ռեակցիայի հավասարումը եւ կատարել հաշվարկ:

6. Բնության մեջ պարզ նյութերի ձեւով հանդիպում են հետեւյալ տարրերը.

1) P, 2) C, 3) Al, 4) Au, 5) Si, 6) S:

Ճիշտ պատասխանը հետեւյալ շարքերից մեկն է.

1. 2, 4, 6, 3. 1, 3, 5,
2. 1, 2, 5, 6, 4. 3, 4:

7. 2 մոլ երկաթի (II) սուլֆիդը բարձր ջերմաստիճանում ենթարկել են թրծման: Գրել ռեակցիայի հավասարումը եւ գտնել, թե քանի՞ մոլ թթվածին է անհրաժեշտ եղել դրա համար.

1. 2, 5, 3. 3, 5,
2. 3, 4. 4:

8. Ացետիլենի այրման ռեակցիայում ածխաջրածնի եւ թթվածնի ծավալները հարաբերում են իրար այսպես.

1. 1: 2,0, 3. 1: 1,5,
2. 1: 2,5, 4. 1: 3,0:

9. $C_nH_{2n}O$ ալդեհիդը արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով օքսիդացնելիս անջատվում է գազ: Ո՞ր ալդեհիդն է: Գրել ռեակցիայի հավասարումը:

Պատասխանում n-ի արժեքն է $C_nH_{2n}O$ բանաձեւում.

1. 4, 3. 2,
2. 3, 4. 1:

10. Գրել նիտրոբենզոլից անիլինի ստացման ռեակցիայի հավասարումը: Պատասխանում 0,5 մոլ անիլինի ստացման համար պահանջվող ջրածնի զանգվածն է.

1. 4, 3. 2,
2. 3, 4. 1:

11. Գրել փոխարկումների ռեակցիաները՝ նշելով պայմանները

ա) $KClO_3 \rightarrow Cl_2 \rightarrow KClO_3 \rightarrow ? \rightarrow SO_2$

բ) մեթան → մեթանալ → մեթանաթթու → CO → C_4H_{10}

գ) Կազմել ստորեւ բերված նյութերի միջեւ (զույգ առ զույգ) ջրային միջավայրում ընթացող ռեակցիաների մոլեկուլային եւ կրճատ իոնական հավասարումները:

KOH, H_2SO_4, $C_{17}H_{35}COOH$, $C_{17}H_{35}COONa$:

12. Որոշել սիլիցիումի հարաբերական ատոմային զանգվածը, եթե այն կազմված է երեք իզոտոպից՝ 28, 29 եւ 30 զանգվածային թվերով, որոնց մոլային բաժինները համապատասխանաբար հավասար են 92,3%, 4,7% եւ 3,0%:

13. Ինչի՞ է հավասար n-ը $KOH \cdot nH_2O$ միացության մեջ, եթե այդ միացությունը 39,1% ջուր է պարունակում:

14. Մեթիլսպիրտի եւ ֆենոլի 19 գ խառնուրդը բրոմաջրի հետ փոխազդելիս ստացվել է 33,1 գ նստվածք: Որոշել ելային խառնուրդի զանգվածային բաղադրությունը (%):

Մայր թատրոն - 80

Թատրոնը՝ որպես հայելի եւ լուսարձակ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՆՅԱՆ

Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնը 80 տարեկան է: 1922 թ. հունվարին թատրոնն առաջին անգամ իր դռները բացեց հանդիսատեսի առջեւ՝ ներկայացնելով «Պեպո» կատակերգությունը:

Սունդուկյանի անունը թատրոնը ստացավ ավելի ուշ, իսկ հրդեհից հետո նոր շենք տեղափոխվելով՝ դարձյալ իր գործունեությունը սկսեց «Պեպոյով»: Թատրոնում հավաքվեցին եվրոպական թատերական արժեքները յուրացրած արեւմտահայ մեծանուն դերասանները՝ Փափազյան, Ներսիսյան եւ այլն, ռուսական ամենաառաջադեմ ուղղությունների հետեւորդ արեւելահայ թատրոնի ներկայացուցիչները՝ Գուլակյան, Վաղարշյան եւ ուրիշներ, ու Սունդուկյանի թատրոնը դարձավ խոշոր մշակութային կենտրոն: Դեռեւս կլինեն հոբելյանական միջոցառումներ, որոնք մայիսին են նախատեսված, կլինեն շնորհավորանքի ու բարեմաղթանքների ճառեր ու ելույթներ: Սակայն ի՞նչ տեղ ունի այսօր մեր կյանքում թատրոնն առհասարակ եւ մասնավորապես Սունդուկյանի անվան թատրոնը: Այն միայն գվարճավա՞յր է, միայն ներկայացումներ դիտելու տե՞ղ, թե՞ մի փոքր ավելին:



«Թատրոնը հասարակության հայելին է»՝ խիստ չարչրկված խոսքն այսօր էլ իր իմաստը չի կորցրել, կամ այլ կերպ ասած՝ թատրոնը մշտապես արտացոլել է այն փոթորիկները, որոնք խմորվել են հասարակության մեջ, ազգային գիտակցության շերտերում: Սակայն թատրոնը միայն հայելի չէ, այլ նաեւ իր շուրջը լուսավորող լուսարձակ, որովհետեւ ինքը նաեւ մեծ ներուժ ունի ծնելու ազգային իդեալներ, ուղղորդելու հասարակական մղումները: Խորհրդային պետության 70 տարիների ընթացքում, որքան էլ պետական գերատեսչությունների կողմից թատրոնին տեսակ է թելադրվել, պարտադրվել խաղացանկ, այնուամենայնիվ, թատրոնը հենց ազգային մշակույթի կենտրոն էր, եւ թատրոնի շուրջ էին հավաքվում ու ձեւավորվում ամենաառաջադեմ հայացքները: Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնը, այնուամենայնիվ, մեծ պետության փոքրիկ մոդելն էր: Երբ 80-ականների կեսերին թատրոնի անհատականություններն սկսեցին այլեւս չհամատեղվել, փնտրել առավել ինքնուրույն գործունեության վայր եւ լքեցին թատրոնը (Մեր Մկրտչյան, Սոս Սարգսյան), հասկանալի էր, որ երկրում թափ են առնելու կենտրոնախույս ձգտումները: Երկրի անհաստատականությունները (ազգային հանրապետությունները) ձգտելու են առավել ինքնուրույն վիճակի՝ անկախության: Երբ թատրոնի իրար հաջորդող ղեկավարները անընդհատ ահազանգում էին Սունդուկյանի փլուզվող տանիքի մասին, թատրոն հասկացող հանդիսատեսները կանխատեսում էին կայսրության փլուզումը: Թատրոնի ծակ տանիքը պատերազմ էր գուժում, որովհետեւ անկախացած երկրի մայր թատրոնի տանիքն ու մայր հայրենիքի երկինքը շատ տարբեր բաներ չեն, ու շուտով սկսվեցին ռմբակոծությունները՝ սահմանամերձ գոտի, Ստեփանակերտ թե Երեւան նշանակություն չունի: Արդեն 8 տարի շարունակվող վինաղաղարը իր խաղաղ հետեւանքը բերեց նաեւ թատրոնին՝ տանիքը վերանորոգվեց, եւ կանոնավոր կերպով բեմադրություններ են արվում, ձեւավորվել է կայուն խաղացանկ: Այնուամենայնիվ, թատրոնում եւ նրա շուրջ ամեն ինչ չէ կայուն, մայր թատրոնի ապագան հստակ չէ, ինչպես որ հստակ չէ մեր հասարակության վաղը, ինչպես փխրուն է այսօրվա հարաբերական անդորրը՝ ներսի եւ դրսի: Շնորհավորելով սունդուկյանական հին ու նոր բոլոր սերունդներին հոբելյանի առիթով ցանկանում ենք, որ թատրոնի այսօրվա մշակները կարողանան շարունակել նրա այդքան հրաշալի կենսագրությունը:

Բայց շնչում է թատրոնը, կա

Թատրոնի 80-ամյա հոբելյանին ընդառաջ՝ որոշեցինք ամբիոն տրամադրել նրանց, ովքեր կերտել են թատրոնի նկարագիրը՝ Սոս Սարգսյան, Խորեն Աբրահամյան: Նաեւ Նիկոլայ Ծատուրյանին, որը մոտ 20 տարի բեմադրություններ է արել թատրոնում, եւ դերասան Տիգրան Ներսիսյանին, որն այսօրվա սունդուկյանական սերնդի ներկայացուցիչն է, այսօրվա թատրոնի հենասյուներից մեկը, ում վրա է հենվում գրեթե ողջ խաղացանկը:

Նիկոլայ Ծատուրյան - *«Մետրո» թատրոնի գլխավոր ռեժիսոր*

Ես Սունդուկյանի թատրոնի Միկոյանն էի, առաջինները փոխվում էին, Միկոյանը մնում էր: 72-ից մինչեւ 92 թվականը 20 տարի թատրոնի երկրորդ ռեժիսորն եմ եղել, եւ այդ 20 տարվա ընթացքում բազմաթիվ գլխավորներ են փոխվել Աճեմյան, Ղափլանյան, Ղազանչյան, Խորեն Աբրահամյան, հետո նորից Ղազանչյան, Մամիկոն Մանուկյան: Սունդուկյանի թատրոնն առաջ նման էր ֆլագմանական նավի, որն իր հետեւից տանում էր մի ողջ նավատորմ: Եվ տոն էր թատրոնում, տոն էր, որովհետեւ թատրոնն իսկապես արվեստի օջախ էր, եւ հանդիսատեսը, մտնելով այդ օջախը, մասնակիցն էր դառնում մեծ տոնի, որը միայն ներկայացմամբ չէր ավարտվում ու սկսվում:

Տիգրան Ներսիսյան *դերասան*

1975-ից ես Սունդուկյանի թատրոնում եմ, հորս՝ Բաբկեն Ներսիսյանի շնորհիվ: Երրորդ դասարան էի, որ Վարդան Աճեմյանն ինձ զբաղեցրեց «Էֆիգենյան Ավլիսում» ներկայացման մեջ: Մինչ այդ էլ ես կուլիսներից նայում էի ներկայացումը եւ երազում հայտնվել բեմի վրա: Հետո փոխարինեցի Վարդուհի Վարդերեսյանին Ջոնիի դերում Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» ներկայացման մեջ: Հայրս Բեն Ալեքսանդր էր խաղում, ես Ջոնի, եւ դա հեքիաթի պես մի բան էր: Հետո ավարտեցի ինստիտուտը եւ, որպես պրոֆեսիոնալ դերասան, ընդունվեցի աշխատանքի այս թատրոնում: Այսինքն կարելի է ասել, որ արդեն 30 տարի իմ տունն է Սունդուկյանի անվան թատրոնը: Բոլոր այս տարիներին նրա հոգսերն իմն են եղել, նրա ձեռքբերումները նույնպես: Իմ կյանքի ամենադաժան ու ամենաերջանիկ օրերը այս թատրոնում են եղել, կապված են եղել թատրոնի հետ: Այսօր, երբ ես արդեն պրոֆեսիոնալ բեմում աշխատելու 17 տարվա փորձ ունեմ, մի բան միայն կարող եմ վստահորեն ասել մեր ժողովուրդը առանց թատրոնի չի կարող ապրել, կարիքն ունի թատրոնի: Այսքան հոգսերի մեջ հայ մարդը չի կորցնում թատրոն հաճախելու, այնտեղ հուզվելու եւ ապրելու ցանկությունն ու շնորհքը: Արտիստի, արվեստագետի ճանապարհը միշտ էլ դժվար է եղել, սակայն այսօր արհեստականորեն են դժվարացնում: Այսօր թատրոնում միայն նվիրյալներն են աշխատում երիտասարդ թե տարեց: 70-ամյա Վարդուհի Վարդերեսյանը բեմ է բարձրանում չջեռուցվող թատրոնում, ուր ծմռանը անտանելի ցուրտ է լինում: Այսօր երիտասարդ դերասանը, ինստիտուտն ավարտելով, թատրոն չի գալիս, որովհետեւ թատրոնի աշխատավարձով ընտանիք չի կարող կազմել, այսօր ամեն կողմում հոգս է: Թեթեւ ձեռքով դժվարություններ են հարուցում նաեւ նրանք, ովքեր ի պաշտոնե պիտի թատրոնի կողքին լինեին: Սակայն 80-ամյակի շեմին մենք հպարտորեն կարող ենք ասել ուրախ ենք, որ մեր 80-ամյա թատրոնը կա, գործում է, որ ի վիճակի ենք հոբելյան նշելու: Կարող էր, չէ՞, թատրոնն առհասարակ չլինել, կարող էր ավտոսալոնի վերածված լինել: Բայց շնչում է թատրոնը, կա , գրիմի հոտը դեռեւս չի կտրվել միջանցքներից:

Սոս Սարգսյան - *«Համազգային» թատրոնի գեղարվեստական ղեկավար, ժողովրդական արտիստ*



Սունդուկյանի թատրոնը մեր մշակույթի ամենաբարձր օջախներից մեկն էր, որն իր ժամանակին վիթխարի դեր խաղաց հասարակության կյանքում: Ըստ էության, մասնակցեց մեր հասարակության, պետության կայացմանը:

Սունդուկյանի թատրոնը երկրին խոսք ուներ ասելու, որովհետեւ այնտեղ հանճարեղ դերասաններ ու ռեժիսորներ էին աշխատում: Մենք այդքան կազմակերպված, այդքան հզոր, հասարակական այդպիսի հնչեղության թատրոն չենք ունեցել երբեք: Ազգային մշակույթի վերազարթոնքի մեջ անգնահատելի դեր ունեցավ Սունդուկյանի անվան թատրոնը, իսկ մասնավորապես Աճեմյանի ղեկավարությամբ այն դարձավ ազգային երեւույթ: Առաջին ռեժիսորը Լեւոն Քալանթարն էր արվեստագետ ու գիտնական, սակայն Սունդուկյանի թատրոնի փառքը, որպես այդպիսին, Արմեն Գուլակյանից է սկսվում: Այդ նա էր, որ կարողացավ թատրոն կառուցել, աճեցնել մեծ արտիստներ Հրաչյա Ներսիսյան, Ջանիբեկյան, Մալյան, Ավետ, Գուրգեն Գաբրիելյան: Մենք երկրորդ սերունդն էինք եւ պարտական էինք հիմնականում Աճեմյանին:

Ասում եմ, որ հիշեցնեմ այսօրվա թատրոններին թատրոնը ինքնուրույն, անկախ եւ հպարտ երեւույթ է, եւ թատրոնը պարտավոր է վարել իր այսօրվա ճիշտ, ազգային քաղաքականությունը, պետական քաղաքականությունը ազգը միավորելու, պետությունը կառուցելու: Այսինքն թատրոնը պիտի քաղաքացիական դիրքորոշում ունենա, ինչպես ունեցել է: Դրանով էր շատ մեծ Սունդուկյանի թատրոնը: Շնորհավորում եմ բոլորին թե թատրոնի մարդկանց եւ թե հանդիսատեսին, մեր մեծ թատրոնի 80-ամյակի կապակցությամբ:

Խորեն Աբրահամյան *ժողովրդական արտիստ*

Ես ծնվել եմ 1930 թ. ապրիլի 1-ին, այսինքն Սունդուկյանի թատրոնից փոքր եմ ընդամենը 10-ը տարով, մի բան էլ պակաս: Եվ իմ ապրած տարիների մեծագույն մասն անցել է այդ թատրոնում, թատրոն, որը միայն թատրոն չէր: Առհասարակ այն ժամանակ էլ, հիմա էլ, եթե որեւէ թատրոնում Շեքսպիրի «Համլետի» ողբերգության գլխավոր հերոսի դերակատար կա, այսինքն կա այնպիսի ուժեղ դերասան, որը Համլետ կարող է խաղալ, ուրեմն այդ թատրոնը լավն է, նրա գոյությունը իմաստ ունի: Ուրեմն, ի՞նչ էր Սունդուկյանի անվան թատրոնը, երբ իրար հետ թատրոնում միասին աշխատում էին Փափազյանն ու Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշյանն ու Ջանիբեկյանը: Ես չեմ ուզում այս թվարկումը շարունակել, բայց եղել է պահ, որ թատրոնում Համլետի մոտ 10 դերակատար է եղել: Հասկանալի է, որ փոխաբերական իմաստով եմ ասում: Բայց արդեն առանց փոխաբերության այս չորս մեծերը հերթով խաղում էին Պրոտասով «Կենդանի դիակ»-ում, Փափազյանն ու Հրաչյան «Օթելլո» էին խաղում, Մեք-Գրեգոր: Հետո թատրոն եկած մեր սերունդը տեսնելու, սովորելու, յուրացնելու բան ուներ: Այո, թատրոնը կոլեկտիվ արվեստ է, սակայն այդ կոլեկտիվը իմաստ է ստանում մեծ անհատականությունների շնորհիվ: Սունդուկյանի թատրոնը մշտապես եղել է խոշոր անհատականությունների թատրոն, եւ Սունդուկյանի թատրոնում այդ անհատականությունները երեւույթ են դարձել ողջ հայ մշակույթի համար, նրանց ստեղծագործությունն ու անհատականությունը դուրս են եկել թատրոնի շրջանակներից: Ես բախտ եմ ունեցել աշխատելու այդ թատրոնում, այնուհետեւ գլխավորել թատրոնը: Եվ այսօր կարող եմ մոտ մեկ տասնյակի չափ ներկայացումների անուններ տալ, որոնք արժեք էին, եւ որոնց ստեղծման ու կայացման մեջ իմ համեստ ներդրումն եմ ունեցել՝ որպես դերասան կամ ռեժիսոր: Ես այսօր չեմ ուզում դրանցից որեւէ մեկն առանձնացնել, բայց փոխարենը ուզում եմ առիթից օգտվելով մի այլ բան ասել: Թե սպորտում, թե արվեստում ամենակարեւոր բաներից մեկը ճիշտ ժամանակին, այսինքն փառքով հեռանալն է: Ես ուզում եմ հայտարարել վստահ եմ, որ դեռ անելիք ունեմ, որ աշխատելու եմ եւ երբ զգամ ուժերիս սպառումը, կհայտարարեմ այդ մասին ի լուր աշխարհի ու մի կողմ կքաշվեմ: Բայց այսօր ես դեռ մեծ ծրագրեր ունեմ, որոնք անպայման իրականություն են դառնալու: Իսկ թատրոնի 80-ամյա հոբելյանին դառնալով ուզում եմ ասել, որ նրա ապագան փայլուն է լինելու, որ թատրոնին դեռեւս մեծ հաջողություններ են սպասում: Ես դրանում չեմ կարող վստահ չլինել, ինչպես չեմ կարող վստահ չլինել, որ փայլուն է լինելու հենց մեր ժողովրդի ապագան: Այլ կերպ լինել չի կարող:

Ոգու փիլիսոփայություն

Լրացավ ԼՂՀ առաջին ղեկավար, Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահվան 10 տարին: Այդ տարեդարձի առթիվ ապրիլի 14-15-ը Արցախում տեղի ունեցան բազմաթիվ միջոցառումներ, որոնց մասնակցելու նպատակով Արցախ էին այցելել նաեւ ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ Արտաշես Շահրազյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Մուշեղ Միքայելյանը:

Ապրիլի 14-ին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, վարչապետ Անուշավան Դանիելյանը, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամները, ԱԺ պատգամավորներն ու կառավարության անդամները, Արթուր Մկրտչյանի զինակիցներն ու ընկերները այցելեցին ԼՂՀ առաջին ղեկավարի շիրիմին: Սպեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում տեղի ունեցավ Արթուր Մկրտչյանին նվիրված հուշերեկո, որին մասնակցում էին նաեւ ԼՂՀ պետական, քաղաքական այրեր: Երեկոյի ընթացքում Ա. Մկրտչյանի պետական, կուսակցական գործունեությունը արժեւորեց ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Վահան Բաղասարյանը: Ելույթներ ունեցան Ա. Շահբազյանը, Մ. Միքայելյանը, խորհրդարանի փոխնախագահ Մ. Օհանջանյանը: Նախորդ օրը խորհրդարանի դահլիճում կայացել էր հիշատակի արարողություն, որին ներկա էին ԱԺ նախագահության անդամներ, պատգամավորներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Արարողության ընթացքում Ա. Մկրտչյանի մասին իրենց հիշողությունները պատմեցին ԱԺ պատգամավորներ Վահրամ Աթանեսյանը, Օլեգ Եսայանը, Վահրամ Բալայանը եւ Լեւոն Հայրիյանը: Միջոցառման առթիվ ներկաներին երախտիքի խոսք ուղղեց Ա. Մկրտչյանի այրին՝ Գոհար Մկրտչյանը: Արթուր Մկրտչյանի մահվան տարելիցի առթիվ հիշատակի միջոցառումներ տեղի ունեցան հանրապետության բոլոր շրջաններում, այդ թվում՝ Ա. Մկրտչյանի ծննդավայր Հադրութում:

Գրել ընկերոջ, համախոհի, զինակցի մասին, հեշտ է, միաժամանակ՝ դժվար: Հեշտ, որովհետեւ Ղարաբաղյան շարժման 14 եւ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահվան 10 տարիները ակնթարթ են ժողովրդի պատմության մեջ: Դժվար, որովհետեւ հասարակության կողմից լիովին չի գիտակցվել եւ դեռ չի գիտակցվում արածի մեծությունն ու ահագնությունը:

«Ի սկզբանե բանն էր»՝ այսպես է ասված Աստվածաշնչում աշխարհի արարման մասին: Դա վերաբերում է նաեւ մեր սերնդին: Այո, սկզբում եղել է խոսքը, եւ այդ խոսքը հնչեցրեցին նրանք, ովքեր ներքնապես համոզված, մաքուր խղճով կանգնեցին մեր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում: Եվ երբ Ղարաբաղի հայության վրա կախվել էր գաղափարական առավել ճկուն «ձեւահնարներով» ներծծված նոր ցեղասպանության սպառնալիքը, նրանք առաջինը կանգնեցին հայրենիքի պաշտպան մարտիկների դիրքերում:

Հայրենիքը իր շարքերից, բոլոր քաղաքներից ու գյուղերից առաջ քաշեց վառ եւ անզուգական անհատների: Նրանցից մեկն էր Արթուր Մկրտչյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նախագահը: Հատկապես նրան էր վիճակված գլխավորել երկրի կառավարությունը ամենադժվար անցումային շրջանում, երբ իշխանության հին համակարգը փլուզվել էր, իսկ նորը նոր-նոր ծիլեր էր արձակում:

Այստեղ տեղին է նշել, որ ճակատագրի բերումով հատկապես Հադրութի շրջանը առաջ քաշեց տաղանդավոր ղեկավարների մի մեծ համաստեղություն: Գուցե այն պատճառով, որ պատմական Դիգակի աշխարհագրական դիրքը, ինչպես ոչ մի տեղ, ընդգծում էր իրավիճակի անհնարինությունը, զանգեր հնչեցնում բոլորին պայքարի հանելով մարդու արժանապատիվ գոյության համար:

1988-ի փետրվար ... Հիշում եմ Հադրութի շրջանի՝ Ստեփանակերտ ժամանած պատվիրակությանը: Նրանց անձնազոհությունը անմնացորդ էր ու անսահման: Նրանց անձնուրացությունը եւ համոզվածությունը մեր գործի արդարացիության մեջ հանգեցրին ողջ ժողովրդի այդ գաղափարների փառապանծ կրողի բազում հերոսություններին: Որ մենք կհաղթենք ոչոք չէր կասկածում թե այստեղ, թե ամբողջ աշխարհում: Եվ այսօր, երբ կանգ առնելով ու հետադարձ հայացք ձգելով անցյալին շարունակում ենք մեր առաջընթացը, ինչպես երբեք վեհորեն փայլատակում են զոհված ազատամարտիկների կերպարները: Այդ վառ անհատականություններից էր Արթուր Մկրտչյանը:

Մենք գիտենք, որ ոչ մի նյութական կացություն, ժողովրդից «սեփականաշնորհված» ոչ մի սեփականություն չի կարող մթագնել կամ նվաստացնել «մարդկային կյանք» կոչվող այն վեհ արժեքը, որը հոգով արի մարտիկները նվիրաբերեցին հանուն ազատության:

Ղարաբաղի փոքր, բայց անհաղթ ժողովուրդը հզոր է, քանի որ նրա շարքերում կան մարդիկ, ովքեր իրենց ապրած կյանքով, ամենօրյա վարքով ցուցանում են, որ պայքարը դեռ չի ավարտվել, մենք դեռ երկար ու դժվարին ճանապարհ ունենք անցնելու, դա մեր պետականության կառուցման եւ միջազգային հանրության կողմից նրա ճանաչման պատվավոր ճանապարհն է: Եվ այդ օրը հեռու չէ. դրանում մենք չենք կասկածում, ինչպես չէինք կասկածում 1988-ի փետրվարին:

Գրիգորի ԱՖԱՆԵՍՅԱՆ

Ջավախքի օրեր Նյու Յորքում

Նյու Յորքի Հայ կենտրոնում տեղի է ունեցել «Ջավախքի հայերը» հանրային դասախոսություն՝ ՀՕՄ-ի «Էրեբունի» եւ «Մայր» մասնաճյուղերի, Համազգայինի, ՀՅԴ «Հայորդիք», Հայ մարմնամարզական ընդհանուր միության եւ Հայ Դատի հանձնախմբերի կազմակերպմամբ:

Դոկտոր Հ. Մարգարյանը, ողջունելով հավաքի մասնակիցներին, կոչ է արել իրենց մասնակցությունը բերել «Ջավախք» հիմնադրամին: Ապա ցուցադրվել է «Ջավախքի հայերը» տեսաֆիլմը, որը ներկայացնում է Ջավախքի կյանքն ու մտահոգությունները:

Ջավախքի պատմական, քաղաքական, տնտեսական եւ այլ հարցերին են նվիրել իրենց զեկուցումները ՄԱԿ-ում ՀՕՄ-ի լիազոր ներկայացուցիչ Ռիչարդ Կիրակոսյանը (անգլերեն) եւ Բուենոս Այրեսի «Արմենիա» թերթի նախկին խմբագիր, միջազգային հարաբերությունների դոկտորի թեկնածու Խաչիկ Տեր-Ղուկասյանը (հայերեն): Վերջինս իր ելույթում մասնավորապես նշել է, որ հայրենակիցների կնճռոտ հարցերի լուծման ամենակարեւոր միջոցը Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների համագործակցությունն է: Այդ համագործակցությունը կա եւ նպաստում է Ջավախքը կայուն պահելուն: Հայաստանի դիվանագիտությունը բավական ակտիվ է, եւ միայն խոստումներով հարցը չի լուծի:

Երկու կառավարությունները պետք է նպաստավոր համաձայնություններ կնքեն ու իրականացնեն դրանք: Կարեւորն այն է, որ Ջավախքի հայկական ինքնուրույնությունը պահվի, եւ որ Ջավախքը Հայաստանի ու Վրաստանի միջեւ կապող օղակ լինի, ինչը շահավետ կլինի եւ Վրաստանի, եւ Հայաստանի համար, ընդ որում՝ ահաբեկչության դեմ մղվող պայքարում: Դասախոսները վերջում պատասխանել են ներկաներին հետաքրքրող մի շարք հարցերի:

Իր գոհունակությունն ու հայրական շնորհակալությունն է հայտնել ծայրագույն վարդապետ Անուշավան Դանիելյանը: Ջավախքցի, այժմ Նյույորքաբնակ Խաչիկ Հունանյանը շնորհակալական խոսք է ուղղել բոլոր նրանց, ովքեր սատար են կանգնում Ջավախքի հայությանը:

Հանդիսության վերջում դոկտոր Հ. Մարգարյանը հրապարակել է այն կազմակերպությունների եւ անհատների անունները, որոնք իրենց նվիրատվություններն են արել «Ջավախք» հիմնադրամին: Հանդիսությունը ողջունել են «Ջավախք» հիմնադրամի եւ ՀՕՄ-ի պատասխանատուները:

Ասենք, որ Խաչիկ Տեր Ղուկասյանը եւ Ռիչարդ Կիրակոսյանը նույն դասախոսություններով հանդես են եկել նաեւ Վաշինգտոնում, Չիկագոյում ու Լոս Անջելեսում:

ԼՈՒՐԵՐ

Ուշագրավ նախաձեռնություն

Զարմանալի չէ, որ արաբ մտավորականները, գրողները, մամուլի եւ զանգվածային լրատվության գործակալությունները հաճախ անդրադառնում են Հայոց ցեղասպանությանը, քանզի Եղեռնի եւ հայ ժողովրդի պատմության հետ կապված շատ դեպքեր արաբական իրականության մի մասն են: Նրանց այդ անդրադարձները գալիս են մեկ անգամ եւս ապացուցելու արաբ ժողովրդի հարգանքի արժանի վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ:

Նման ուշագրավ նախաձեռնություն էր ապրիլի 8-ին «Աբու Դաբի» հեռուստակայանի «Անմեղներ» հաղորդաշարի Հայոց ցեղասպանությանը նվիրված հաղորդումը: Ավելի վաղ արաբական մեկ այլ առաջնակարգ հեռուստաընկերություն «Ալ Ջազիրան», վիճաբանական զրույցով ներկայացրել էր Ցեղասպանությունը: «Աբու Դաբիի» հաղորդումը, որ պատրաստել էին այդ նպատակով Հայաստան գործուղված հեռուստակայանի լրագրողները, հատկանշական էր իր փաստագրական-վավերագրական բնույթով: Հաղորդման ընթացքում ներկայացվում էին հանդիպումներ Ցեղասպանությունը վերապրած հայաստանաբնակների, հայ երիտասարդների, Հայաստանի մշակութային, գիտական ու քաղաքական շրջանակների ներկայացուցիչների, ինչպես նաեւ Ցեղասպանության թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի եւ Հենրիկ Իգիթյանի հետ:

Հաղորդումը եթեր տրվեց Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի նախօրյակին եւ հայ-արաբական հարաբերությունների տեսանկյունից ունի քաղաքական նշանակություն:

Այս ձեռնարկով «Աբու Դաբի» հեռուստակայանը իր նպաստն է բերում արաբական աշխարհին Հայոց ցեղասպանությանը ծանոթացնելու գործում:

105 հազար դոլար նվիրատվություն ճեմարանին

Ապրիլի 13-ին Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանյան ճեմարանում տեղի ունեցավ ճաշկերույթ, որին ներկա էին Լիբանանի թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերյանը, երիտասարդության եւ սպորտի նախարար Սեպուհ Հովնանյանը, Լիբանանում Հայաստանի դեսպան Արեգ Հովհաննիսյանը, Բուրջ Համուդի քաղաքապետ Անդրանիկ Մսըրլյանը, նախկին նախարարներ եւ պատգամավորներ, կուսակցական, ազգային եւ միութենական մարմինների ներկայացուցիչներ, ճեմարանի բարերարներ, ծնողներ ու բարեկամներ: Ճաշկերույթից հետո տեղի ունեցավ համերգ: Երեկոյի ընթացքում ճեմարանի սաների ֆոնդին հանգանակվեց 105 հազար ամերիկյան դոլար:

«Ցեղասպանությունը՝ Աստվածաշնչից մինչեւ մեր օրերը»

«Դը Ջենոսայդ ֆեքթըր» հեռուստաալիքի համար պատրաստված վավերագրական մի կինոնկար ապրիլ ամսից սկսած ցուցադրվելու է Միացյալ Նահանգների բազմաթիվ հեռուստակայաններով: 4 ժամ տեւողությամբ այդ կինոնկարը արդեն շահել է 2002-ի Հյուստոնի միջազգային ֆիլմերի փառատոնի եւ «Պրիզմ» հաստատության վավերագրական կինոնկարների մրցանակները:

«Անցյալի եւ ներկայի Ցեղասպանությունների բոլոր զոհերին եւ վերապրողներին նվիրված» www.genocidefactor.com սայթը մանրամասն տեղեկություններ է տալիս այդ կինոնկարի ստեղծման մասին: Սայթը ներկայացնողները, առաջին բաժնում հակիրճ անդրադառնալով մարդկության պատմության ցեղասպանություն արհավիրքին, գրում են. «Ակադեմիկոսների, մասնագետների եւ վերապրողների օգնությամբ «Դը Ջենոսայդ ֆեքթըրը» քննարկում է Ցեղասպանության սահմանումն ու բարդ ուղղությունները ուսումնասիրելով նրա պատմությունը, ներկա վիճակը եւ մտահոգվելով ապագայի մասին»:

Վավերագրական կինոնկարում իրենց խոսքն են ասում հայ պրոֆեսորներ Ռուբեն Ատալյանը (Արմենիեն նեշընալ ինստիտուտի տնօրեն), Ռիչարդ Հովհաննիսյանը (USLA համալսարան», Լեւոն Մարաշլյանը (Գլենդեյլ կոմիունիթի քոլեջ) եւ Նիկոլ Վարդանյանը (Կոլումբիայի համալսարան): Վերապրողները Հայոց ցեղասպանության ականատեսներն են:

19-25 ԱՊՐԻԼ, 2002

Մտածելու առիթ կա

Ապրիլի 21-ին Երեւանի «Հրազդան» մարզադաշտում կազմակերպվելու է յուրօրինակ շոու: Միջոցառման զարդն է լինելու ոսկեզօծված «Արարատի» եւ ԽՍՀՄ հավաքականի վետերան ֆուտբոլիստների ընկերական հանդիպումը: Այդ ամենը նվիրվելու է հանրահայտ մարզիչ Նիկիտա Սիմոնյանի ծննդյան 75-ամյակին:

Գագիկ
ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ինչ խոսք, փառահեղ ուղի անցած հայ մարզիչն արժանի է ամենայն մեծարանքի, եւ նրա պատվին կազմակերպված ամեն մի միջոցառում իրադարձություն է: Նրան սիրում են Ռուսաստանում, որտեղ այժմ կատարում է ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահի պարտականությունը, նաեւ՝ Հայաստանում:

Տարակուսանք է առաջացնում մեկ այլ իրողություն: Բանն այն է, որ նախորդ տարի Երեւանում արդեն շուքով նշվել է Ն. Սիմոնյանի 75-ամյակը: Հոբելյանին էր նվիրված «Արարատի» եւ Լեհաստանի հավաքականի վետերան ֆուտբոլիստների՝ «Հանրապետական» մարզադաշտում անցկացրած ընկերական հանդիպումը: Երեւանյան թիմը մրցասպարեզ էր դուրս բերել վաստակաշատ հայ մասնագետը: Նրան բազմաթիվ պարգեւներ հանձնվեցին, շնորհավորանքներ հղվեցին: Հայաստանի իշխանության ներկայացուցիչներն էլ իրենց վերաբերմունքը դրսեւորեցին: Միջոցառումից հետո հատուկ ճաշկերույթ էր կազմակերպվել...

Ինքնին հարց է ծագում նույն հոբելյանը քանի՞ անգամ կարելի է կազմակերպել: Ստացվում է, որ եթե մեկ անգամ այն անցկացվել է «Հանրապետական» մարզադաշտում, ապա ոչինչ չի խանգարում նույնը մեկ տարի հետո կրկնել «Հրազդանում»:

Սա էլ ոչինչ... Հասկանալ կարելի է՝ տարբեր կազմակերպություններ են մեջ ընկել, որոնք շոու սարքելով ցանկանում են փող աշխատել: Բայց արդյո՞ք դրա համար հարմար ժամանակ է ընտրվել:

Ընդամենը մի քանի օր է անցել «Արարատի» հուսալի պաշտպան, բոլորի կողմից սիրված Ալեքսանդր Կովալենկոյի անժամանակ մահից: Բացի դրանից, ինչքանո՞վ է նպատակահարմար տոնակատարություն անցկացնել հայերիս համար ամենատխուր իրադարձության՝ Եղեռնի օրվա շեմին:

Վարագուրված պատմություն, ձեւական մոտեցում

Չարչրկվող, մտացածին այն խոսակցությունները, թե Անթալիայում կայացած աշխարհի առաջնությունից հետո մեր չորս ծանրորդներն անհիմն են որակազրկվել եւ Հայաստանի հավաքական թիմերն էլ մեկ տարով չեն հանվել, բոլոր տեսակի միջազգային մրցաշարերից, սին դուրս եկան:

Փետրվարին Լեհաստանում եւ մարտին Կատարում կայացած Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի նստաշրջաններում քննարկեցին մի շարք կարեւոր հարցեր: Սակայն համաժողովներում քայլ չձեռնարկվեց, անփոփոխ թողնվեց Հայաստանի ծանրորդների հանդեպ նախկինում կայացված որոշումը պատիժը:

Այսպիսով, երկաթախաղի մեր վարպետները մրցահարթակ կարող են դուրս գալ միայն նոյեմբերի 10-ից հետո: Հայաստանի հավաքականը կմասնակցի նոյեմբերի 19-ին Վարշավայում մեկնարկող աշխարհի առաջնությանը:

Ներկայումս այն տպավորությունն է գերիշխողը, թե ոչինչ էլ չի եղել: Ծանրորդներն ուսումնամարզական հավաքներ են անցկացնում, Հայաստանի առաջնություններ: Կարգազանց մարզիկների անուններն էլ չեն հանվել 2001 թվականի տասը լավագույնների ցուցակից: Համենայնդեպս, այդ մասին պաշտոնական ոչ մի հայտարարություն չի արվել: Նրանք եւ մարզիչները չեն շտապում ամբողջովին վերադարձնել պարգեւատրության գումարները: Ի դեպ, այդ մասին մարզական պետական կառույցի ղեկավարությունը հատուկ որոշում է կայացրել: Սակայն ստացվում է, որ ամեն բան ձեւական է:

Ոչ ոք չի շտապում պետության փողը վերադարձնել

Մարզական պետական կառույցի ղեկավարներից մեկը նախորդ տարի մի առիթով հայտարարեց, որ նպատակահարմար չի գտել, որպեսզի մարզաձեւերից մեկի ներկայացուցիչները ներհայաստանյան մրցումներ անցկացնեն, փող ծախսեն, քանի որ տարեվերջ է, եւ առջեւում էլ միջազգային մեկնարկներ չկան: Այժմ հայ ծանրորդները նույն իրավիճակում են, սակայն նրանց առջեւ ոչ մի այդպիսի սահմանափակում չի դրված: Թե սա ինչո՞վ է պայմանավորված խնդրեցինք իր տեսակետը հայտնել Ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահի, հավաքականի գլխավոր մարզիչ ՕԳՍԵՆ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ.

- Ճիշտ է, որակազրկումը տարածվում է Հայաստանի ծանրամարտի բոլոր թիմերի վրա, սակայն չպետք է անգործության մատնվել: Եթե հավաքներ չանցկացվեն, մրցումներ չկազմակերպվեն, գումարներ կշահենք, սակայն հետագայում շատ կտուժենք:

- Նախորդ տարի ի՞նչ գումար էր հատկացվել ծանրորդներին, եւ այս տարի ինչպիսի՞ ֆինանսավորում է նախատեսվել:

- Եթե չեմ սխալվում, 2001 թվականին հատկացվել էր շուրջ 70 միլիոն դրամ: Նույնպիսի ծավալ է նախատեսված նաեւ այս տարի: Սակայն, քանի որ միջազգային մեկնարկների չենք մասնակցելու, այդ ծախսերը, թերեւս, փոքր-ինչ նվազեն:

- Պարգեւատրված գումարները վերադարձնելու մասին ի՞նչ կասեք:

- Խոսքը շուրջ 28 հազար դոլարի մասին է: Մարզիկներից փողը պետք է վերադարձնեն Արսեն Մելիքյանը եւ Գագիկ Խաչատրյանը, մարզիչներից ես եւ Ռոբերտ Հովհաննիսյանը: Ինքս պետական գանձարկղն եմ մուծել շուրջ 600 հազար դրամ, Մելիքյանը 500 հազար, Խաչատրյանը 300 հազար: Պարտք ենք մնում շուրջ 25 հազար դոլար: Պայմանավորվել ենք, որ առաջիկա օրերին մնացած գումարը եւս կմուտքագրվի:

Աշխարհի չեմպիոնը ցանկանում է հեռանալ

Ինչ խոսք, մի քանի մարզիկի պատճառով լուրջ հարված է կրում հայկական ծանրամարտը: Անակնկալ էր, ինչ հայտարարեց սպիտակցի աշխարհի չեմպիոն Արմեն Ղազարյանի հայրը եւ մարզիչը ՄՀԵՐ ՂԱԶԱՐՅԱՆԸ.

- Դիմել եմ Հայաստանի պետական մարզական կառույցի եւ ՀԱՕԿ-ի ղեկավարությանը, որպեսզի թույլատրեն, որ որդիս եւ իմ սանը Ա. Ղազարյանը տեղափոխվի, հանդես գա այլ երկրի հավաքականի կազմում: Ֆինանսական ողջ ծանրաբեռնվածությունը մնում է ինձ վրա: Երկրաշարժից հետո բնակարան չեմ ստացել, տասը տարի ապրել եմ վագոն-տնակում: Այժմ ժամանակավոր հաստատվել եմ մորս տանը: Այդ տունը գրավ է դրվել, ստացված գումարն էլ օգտագործվել է մայիսին Նեպալում կայանալիք աշխարհի երիտասարդների առաջնությանը նախապատրաստվելու համար: Արմենը չեմպիոն կարող էր դառնալ աշխարհի ռեկորդով:

Նա 20 տարեկան է, երիտասարդների, պատանիների Եվրոպայի տասից ավելի ռեկորդների հեղինակ եւ 2004 թվականի օլիմպիական խաղերում կարող է մեդալի ռեալ հավակնորդ լինել: Փաստորեն, Արմենը կորցնում է ամեն հեռանկար:

Եվ անիմաստ էր, որ Արմենն ուժերը չափի Հայաստանի երիտասարդական առաջնությունում:

- Իսկ ծաղկաձորյան ուսումնամարզական հավաքներին ինչո՞ւ չեք ներկայացել:

- Դրանց գրեթե չենք մասնակցել, քանի որ արդյունավետ չեն: Ինքներդ դատեցեք 2002 թվականից անցել է շուրջ 140 օր, սակայն Հայաստանի թիմը ուսումնամարզական հավաք է անցկացրել երկու անգամ, ընդհանուր հաշվով 19 օր: 9-10 օր տեւողությամբ հավաքները ոչինչ չեն կարող տալ, քանի որ այդ ընթացքում մարզիկը կարողանում է միայն կլիմայափոխվել: Իսկ թե մեր փոխարեն ովքեր են մասնակցել հավաքներին, կամ ի՞նչ են արվել այդ փողերը բնավ չի հետաքրքրում: Դիմել ենք մարզական պետական կառույցի եւ ՀԱՕԿ-ի ղեկավարությունը, որպեսզի Արմենը հավաքներ անցկացնի Սպիտակում կամ Երեւանում, սակայն մերժում ենք ստացել:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Անփառունակ մրցելույթներ

Ֆինլանդիայի Սեյնյաոկի քաղաքի մարզապալատում կայացած հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում անփառունակ մրցելույթներ ունեցան Հայաստանի ներկայացուցիչները: 27 թիմերի մրցավեճում նրանք հանգրվանեցին 13-րդ հորիզոնականում:

Ցավոք, իրեն ոչնչով չդրսեւորեց 66 կգ քաշային Վաղինակ Գալստյանը: Աշխարհի չեմպիոնը տեղ զբաղեցրեց սոսկ երկրորդ տասնյակում:

Մեր թիմից լավագույնը աշխարհի փոխչեմպիոն Կարեն Մնացականյանն էր: Ընդ որում, Կարենը կիսաեզրափակիչում զիջեց օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Արմեն Նազարյանին: Ի դեպ, Բուլղարիայի դրոշի ներքո հանդես եկող հայ ըմբիշն էլ նվաճեց հին աշխարհամասի չեմպիոնի տիտղոսը: Իսկ Մնացականյանը, ուշքի չգալով, անհաջողության մատնվեց նաեւ բրոնզե մեդալի համար մրցամարտում եւ բավարարվեց չորրորդ տեղով:

Լավագույնների թվում

ՖԻԴԵ-ն հրապարակել է աշխարհի ուժեղագույն շախմատիստների դասակարգման աղյուսակը: Այն շարունակում է գլխավորել Գարրի Կասպարովը: Նրան հաջորդում են Վլադիմիր Կրամնիկը եւ Վիշվանաթիան Անանդը:

Հարյուր լավագույնների թվում են հայաստանցի երեք գրոսմայստեր: Վլադիմիր Հակոբյանը, Ռաֆայել Վահանյանը եւ Սմբատ Լպուտյանը զբաղեցնում են համապատասխանաբար 18-րդ, 26-րդ եւ 53-րդ հորիզոնականները:

Գրեթե առանց անակնկալների

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության մեկնարկային տուրում անակնկալներ գրեթե չգրանցվեցին: Նախորդ առաջնության չեմպիոն «Փյունիկը» եւ բրոնզե մեդալակիր «Սպարտակը» առավելության հասան համապատասխանաբար «Բանանցի» (3:1) եւ «Արարատի» (2:0) նկատմամբ: Փոխչեմպիոն «Զվարթնոցը» նյարդային պայքարում 0:1 հաշվով զիջեց «Միկայի»ն: Ընդ որում, վերջինիս հաղթանակ բերեց 88-րդ րոպեին Արմեն Շահգելդյանի խփած գնդակը: Ի դեպ, 33-րդ րոպեին հարձակվողը չէր իրացրել 11 մետրանոց տուգանային հարվածը:

Մյուս հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. «Կոտայք» -«Դինամո-2000» 1:3, «Լոռի»-«Շիրակ» 0:4, «Արցախ»-«Լեռնագործ» 1:1:

Հաղթական մեկնարկ

Չարլսթոունի կորտերում կազմակերպված թենիսի միջազգային մրցաշարում հաջող մեկնարկեց Մարի-Գայանե Միքայելյանը (Շվեյցարիա): Նա առաջին խաղում ստիպեց անձնատուր լինել իտալուհի Ֆրանչեսկո Սկիավոնեին: Գայանեի հաջորդ մրցակցուհին խորվաթ Իվո Մայոլին է:

ԱԶԴԱԳԻՐ

«Արամ Խաչատրյան» համերգասրահ

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ
Ապրիլի 19-ին Ստեֆան Էլմաս: «Դաշնամուրի կոնցերտ թիվ 2»
Սեն-Սանս «Սիմֆոնիա թիվ 3»
Մենակատար *Արմեն Բաբախանյան* (դաշնամուր)
Դիրիժոր *Ալեքսանդր Սիրանոսյան* (Ֆրանսիա)
Ապրիլի 24-ին համերգ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին
«Համաշխարհային հոգեւոր երաժշտության գանձարանից» համերգաշար
Վերդի «Ռեքվիեմ»
Գեղ. ղեկ. եւ գլխ. դիրիժոր *Էդուարդ Թոփչյան*
Համերգների սկիզբը 19.00-ին

Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն
Ապրիլի 20-ին, 21-ին «Ագռավը» Կ. Գոցցի
Ապրիլի 24-ին «Մեծ լռություն» Պ. Զեյթունցյան
Ապրիլի 25-ին «Իմ սիրտը լեռներում է» Վ. Սարոյան
Ապրիլի 26-ին «Ռոմեո եւ Ջուլետ» Վ. Շեքսպիր
Գեղ. ղեկ. *Արմեն Խանդիկյան*
Ներկայացումների սկիզբը 18.00-ին

Ա. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն
Ապրիլի 19-ին «Հիշատակման աղոթք»
Ապրիլի 20-ին «Ինկած բերդի իշխանուհին» Լեւոն Շանթ
Ապրիլի 25-ին «Քանդած օջախ» Գ. Սունդուկյան
Ապրիլի 26-ին «Մանկիկս» Ժ. Լետրազ
Ներկայացումների սկիզբը 18.00-ին:

Մանկական ներկայացումներ
Ապրիլի 20-ին «Ալյոնուշկայի երջանկությունը» Լ. Իստինով
Գեղ. ղեկ. *Ալեքսանդր Գրիգորյան*
Սկիզբը 12.00-ին

Երեւանի կամերային թատրոն
Ապրիլի 19-ին «Կաբարե»
Ապրիլի 20-ին «Անտեր Ground»
Ապրիլի 21-ին, 26-ին «Միսս Հայաստան անաստվածային կատակերգություն»
Գեղ. ղեկ. *Արա Երնջակյան*
Ներկայացումների սկիզբը 19.00-ին:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն
Ապրիլի 23-ին «Ոտքի, դատարանն է գալիս»
Ապրիլի 26-ին «Վերադարձ Սորենտո» Ալդո Նիկոլայի
Գեղ. ղեկ. *Վահե Շահվերդյան*
Ներկայացումների սկիզբը 18.00-ին

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
ТЕАТР АМАЗГАИН
HAMAZGAYIN THEATRE
Համազգային թատրոն
Ապրիլի 23-ին «Օսկան Պետրովիչը էն կինքումը» Գ. Սունդուկյան
Ապրիլի 26-ին «Գուցե փրկվենք» Սամվել Կոսյան
Գեղ. ղեկ. *Հրաչյա Գասպարյան*
Տնօրեն *Սոս Սարգսյան*
Ներկայացումների սկիզբը 19.00-ին

Մնջախաղի պետական թատրոն
Ապրիլի 20-ին «Գեներ»
Ապրիլի 21-ին «Խաղ»
Ապրիլի 26-ին «Մանրապատումներ»
Ներկայացումների սկիզբը 19.00-ին

With the compliments of

GUEDIKIAN Bros.

ELECTRICSL CONTRACTING

TEL.: 01-269456

Խոյ - Ցանկալի է կայունությունը գործընկերների հետ հարաբերություններում՝ թե՛ մասնագիտական ոլորտում, թե՛ անձնական կյանքում: Մանավանդ որ այդ հարաբերությունների հաստատունությունից է կախված մայիս ամսվա ձեր ֆինանսական վիճակը: Շաբաթվա վերջին՝ շատ հետաքրքիր առաջարկ կստանաք աշխատավայրում:

Ցուլ - Ամեն ինչ կլինի ինչպես Կռիլովի առակում: Մերկուրին եւ Վեներան դեպի իրենց կքաշեն ձեզ: Մերկուրին բարենպաստ հնարավորություններ կստեղծի գործնական կապերի հաստատման համար, իսկ Վեներան կուժեղացնի զվարճանքների եւ հանգստի ձեր ձգտումը:

Երկվորյակներ - Պետք չէ հավատալ ստացված ինֆորմացիային: Սովորեք ճիշտ գնահատել նույնիսկ լավագույն ընկերոջ կամ ընկերուհու ասածը. ինչպես ասում են՝ վստահիր, բայց ստուգիր: Այժմ պետք է տեղյակ լինել բոլոր նորություններին, որպեսզի բաց չթողնեք կարեւոր տեղեկությունը:

Խեցգետին - Նպաստավոր է մթնոլորտը կարիերայում նոր թռիչք կատարելու համար: Կարող եք ծառայողական պարտականությունները հանձնարարել գործընկերներին. ի դեպ, դա միայն կբարելավի ձեր հարաբերությունները նրանց հետ: Շաբաթվա վերջին կարելի է լուրջ գնումներ կատարել:

Առյուծ - Ձեր կարիերան վերելք է ապրում: Եթե միայն այս շաբաթ ավելի շահավետ աշխատանք չառաջարկեն, սպասեք հաճելի անակնկալի՝ աշխատավարձի բարձրացման կամ պարգեւավճարի: Կարող եք գնումներով ուրախացնել մերձավորներին, որոնց կարծես մոռացության եք մատնել աշխատանքի պատճառով:

Կույս - Սվարտվում է հոգեբանական վերակառուցման բարդ շրջանը: Արժե հետաձգել բոլոր գործերը (կամ մի քիչ թուլացնել աշխատանքային ակտիվությունը), տնտեսական խնդիրները եւ զբաղվել սեփական անձով ու առողջությամբ: Գուցեեւ ճանապարհորդելու ժամանակն է:

Կշեռք - Փորձություն է սպասվում կողակցի հետ հարաբերություններին: Այս անգամ քաղաքության նոխազ կարող են դառնալ ֆինանսները: Բարեբախտաբար, շաբաթվա վերջին իրավիճակը կհարթվի, եւ կհաջողվի վերացնել ընտանիքում ստեղծված լարվածությունը

Կարիճ - Այժմ հարկ է զբաղվել առողջությամբ. պահպանեք դիետա, ավելի շատ քնեք: Տարեց Կարիճներն ավելի լավ է՝ ուշադրություն դարձնեն կոկորդին եւ վահանաձեւ գեղձին: Շաբաթվա ընթացքում ստիպված կլինեք լուծել նաեւ ընկերների ու ազգականների պրոբլեմները:

Աղեղնավոր - Կարող եք ուժերը փորձել բոլորովին նոր գործում (հատկապես եթե այն կապված է գեղեցկության ինդուստրիայի, գյուղատնտեսության եւ սննդամթերքի վաճառքի հետ): Ցանկացած դեպքում ձեզ սպասվում է հաջողություն եւ լավ կարիերա::

Այծեղջյուր - Այս շաբաթ փոփոխություններ կլինեն տանը: Հնարավոր է դրանք կապված լինեն նոր հոբբիի երեւան գալու կամ երեխաների հետ: Աշխատեք այս շաբաթ պարտք չտալ եւ մեծ գնումներ չկատարել: Արժե, որ երիտասարդ Այծեղջյուրները մտածեն կարիերայի մասին: Օգտագործեք բոլոր հնարավորությունները կրթական մակարդակի եւ մասնագիտական վարպետության բարձրացման համար:

Ձրհոս - Ինչպես միշտ, հետաքրքրությունները կապված կլինեն տան եւ ընտանիքի հետ: Եթե կարողանաք կամուրջներ գցել ձեր բոլոր մերձավորների հետ հարաբերություններում, ապա շուտով ամուր եւ հուսալի թիկունքը՝ ձեր ընտանիքը, կօգնի լուրջ հաջողությունների հասնել գործերում:

Ձուկ - Շատ բան կախված կլինի այն բանից, թե որքանով հաջողակ կլինի այս շաբաթը: Շաբաթվա կեսին ի հայտ կգան մեծ գումարներ վաստակելու բազմաթիվ նոր հնարավորություններ, միայն թե բաց մի թողեք դրանք: Հաջողության հասնելու համար հարկ կլինի շատ ճանապարհորդել, ակտիվորեն շփվել տարբեր մարդկանց հետ եւ նոր կապեր հաստատել:



WITH THE COMPLIMENTS OF

H&V

LEATHER GOODS

hampy (confection)

1971

Men's Garment Manufacturer

TEL: 961-1-254129 FAX : 961-1-254509

E-Mail : hampy@cyberia.nett.lb